

## Ը. Թ. ԿԻՏԱՅԵՎ

ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆՆԵՐԸ  
ԿՈԼՏՆՏԵՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
1933 թվականի ՀԵՏ  
ԱՃՆԱՆԱՑԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

631.5  
4-52



**ՀՐԱՏԱՐԱԿՅԱԼԻՑՈՒԽ ՀՅՈՒՄԱՍՏԵՐ ԿՈՎԿԱՅԱ**  
ԴՈՒՏՈՎ-ԴՈՆ 1933

1933

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНЫХ  
ЯЗЫКОВ  
Академии наук  
СССР

ԱՀ 54-Ն  
538

04 AUG 2010

Ա. Պ. ԿԻՍԱՅԵՎ

631.5

4-52

ՑԱՆՔՄԱՇՐՁԱՆՆԵՐԸ  
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
1933 թվի  
ԱՃԱՆԱՑԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

ԳՐԱԴԱՐԱՆ  
ԻՆՍԻՏՈՒՏԱ  
ՊՈՏՈԽԱՀԱՆ  
Ակադեմիա Խառ  
СССР



ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՑՈՒԿԻՆՎԱՅԻ ԿՈՎԿԱՆ»  
ՕՂԱԾՈՎ-ԴՈՆ  
1933

20 MAY 2013

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ցերես

1. Քերքի բարձրացումը կենարոնական խնդիր և . . . . .	3
2. Ամեն մի կոլանտեսության կանոնավոր ցանքաշղթան . . . . .	5
3. Ի՞նչպիսի ցանքաշղթաններ են մտցվում կոլանտեսությունների մեջ 9	
Յերկրամասի հյուսիսային մասը (յերշաղական կլիմայական զննու) 10	
Յերկրամասի կենարոնական հատիկային մասը (անկայուն խռովացման զննու) . . . . .	13
Յերկրամասի Հարավային մասը (խոնավ կլիմայական զննու) . . . . .	16
Հարավ-արևելյան հատիկային սայրներ (անկայուն խռովացման զննու) . . . . .	19
Յերկրամասի Արևելյան մասը (յերաշապային և չտփազանց յերաշապային զննու) . . . . .	21
Աղջային մարգերը . . . . .	23
4. Աշնանցանների նախորդները և ագրոտեխնիկան ցանքաշղթան-ներում . . . . .	25
5. Աշխատանքների ժամկետները և վրուակն առաջին պլանում . . . . .	42
6. Աշունն և վճռում ցանքաշղթաններ մացնելու հաջողությունը . . . . .	45
7. Ցանքաշղթանները պետք են մացնեն կոլանտեսային մասնակը . . . . .	46

## Հավելված

Քերքի բարձրացման մեջցառումների մասին (ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիտարքների Խօրհրդի և ՀԿ(Բ)Կ կենակոմի վորոշումը) 48	
Կոլանտեսություններում ցանքաշղթաններ մացնելու մասին (1933 թվի ոգոսասի Զ-ին ՀԿ(Բ)Կ ի Հյուսիսային Կովկասի Յերկրկոմի և Յերկրգործկոմի վորոշումը) . . . . .	51
Հարաւանգ Հյուսիսային Կովկասի յերկրամասի կոլանտեսություններում ցանքաշղթանների անցկացնելը . . . . .	55



56932 - 66

«Ժամանակ» և արդեն, ցանեսերի տարածություններում ավելացնելով, անեսուրյան լայնության աճից պայմանական դարձնելով նողերի լավագույն մօակաւմը, բերքի բարձրացման իրերի գլխավոր յեվ կենարոնական խնդիրը գյուղատնտեսուրյան զարգացման ասպարեզում տվյալ օրջանում»:

..... «1933 թվի բնրացման բայր խորհենական անդամություններում յեվ զուտնեսուրյան նորի միջամտությունը, իրենի բերքի բարձրացման լավագույն միջոցներից մեկը, մազնել ցանեսուրցան»:

(1932 թվի 29/IX-ի ԺԿՄ և ՀԿ(Բ)Կ ԿԿ-ի վորոշումներից):

## 1. ՔԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ե

Գյուղատնտեսության ասպարիզում աշխատող բոլոր կազմակերպությունների առաջ կուսակցության և իշխանության կողմից զրված ե բոլոր գյուղատնտեսական կուլտուրաների բերքի բարձրացման պայքարն, իրեն տվյալ մոմենտում գյուղատնտեսության զարգացման գլխավոր և կենարոնական խնդիր:

Այս խնդիրը Հյուսիսային Կովկասի համար առանձին սուր նշանակություն ունի:

Մեր յերկրամասում կոլտնտեսային յերկրագործությունը, հաջողությամբ զարգացնելով, ընդարձակելով ցանքաների տարածությունը, բերքի բարձրացման քիչ արդյունքներ և տալիս:

Բույսերի խոշոր չափով վարակված լինելը վնասատուներով և հիվանդություններով, դաշտերի չափազանց կեղ-

տուավածությունը, վորը կոլանտեսություններն իբրև «Ժառանգություն» ստացել են անհատական՝ տնտեսավարությունից, ազրոտեխնիկային սարոտաժը կազմակերպված կուլակության կողմից, ազրոտեխնիկայի աշխաթող անելը հասցին դաշտերի աղտոտվածության և բերքի խոշոր կորուստներին:

Մինչև անգամ կուբանի լավագույն սևահողերում, կլիմայական բարեհաջող պայմաններում ստացվել են անբավար բերք: Այս ամենը պահանջում էն համառ կոկի մոլախոտերի դեմ՝ ազրոտախնիկայի, դաշտերի մշակության բարձր վորակի համար:

Ներկա 1933 թվի գարնանացանի ժամանակ Հյուսիսային Կովկասյան յերկրամասը խոշոր հաջողությունների հասավ հողի լավագույն կերպով մշակելու պայքարում:

Եերկրամասն այդ հաջողություններին հասավ շնորհիվ կուլակային սարոտաժի ջախջախման, քաղցրածինների ստեղծման, շնորհիվ մասսաների մորթիլզացիայի, կուտակցության առաջնորդ ընկ. Ստալինի բոլոր կոլտնտեսականներին ունեոր դառնալու լոգունգի շուրջը:

Կոլտնտեսական լայն մասսաների տրամադրության մեջ արմատական բեկում կատարվեց աշխատանքի և կոլտնտեսության սեփականության վերաբերմամբ: Ամրացավ աշխատանքային դիսցիլինան: Շատ կոլտնտեսություններ գարնանացանը շատ ավելի կանուխ վերջացրին և դրա հետեւ անհամեմատ ավելի լավ, քան թե առցյալ տարիներում: Շատ կոլտնտեսություններ լավ քաղցան արին հասկային և մշակովի կուտուրաները և դրանով իրենց դաշտերում մոլախոտերի դեմ սիստեմատիկ կովի սկիզբ դրին:

Սակայն, այս միայն սկիզբն ե, միայն առաջին քայլերն են: Խոշոր սոցիալիստական տնտեսության առավելությունները, աճող տեխնիկական զինավորությունը և կոլտնտեսային մասսայի արտադրական վերելքն ստեղծում են 1933

թվի աշնան գյուղատնտեսական կամպանիայի ընթացքում կոլտնտեսային դաշտերի բերքի բարձրացման ծագմակած կովի համար բոլոր պայմանները: Բերքի բարձրացման այս պայքարի մեջ առաջնակարգ յեվ կարեվոր միջացառումներից մեկը հանդիսանալ ե կոլտնտեսությունների մեջ կանոնավոր ցանքացաներ մազնելը:

## 2. ԱՄԵՆ ՄԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՑԱՆՔԱԾԵՐՉԱՆ

Կուսակցության կենտրոնական կոմիտեն և Միության ժողովադատությունը վորոշել են ցանքսաշրջանն «իրրև բերքի բարձրացման լավագույն միջոցներից մեկը» (1932 թ. 29/IX վորոշումը): Խնչումն է կայանում ցանքսաշրջանի նշանակությունն, իբրև բերքի բարձրացման միջոց:

Մեր դաշտերում մշակվում են շատ զանազան տեսակի կուտուրաներ՝ աշնանացան և գարնանացան, հասկային, մշակովի հատիկային և զանազան տեսակի տեխնիկական բուսանային կուտուրաներ, միամյա և բազմամյա խոտեր և այլն:

Այս բոլոր կուտուրաները հողի տարբեր տեսակի մշակում և խնամք են պահանջում, տարբեր քանակությամբ սննդաբար նյութեր և ջուր են վերցնում հողից և տարբեր խորությունից, վարակվում են զանազան տեսակ ֆիսասատուներով և հիվանդություններով, տարբեր տեսակ կովում են մոլախոտերի դեմ, ցանքում և հավաքվում են տարբեր ժամանակներում:

Այդ պատճառով ել զանազան կուտուրաներ հետեւյալ բույսի համար իրանցից հետո հողը թողնում են վոչ միատեսակ վիճակում:

Միքանի բույսերից հետո (որինակ, գարնանացան հացաբույսերից) ավելի շատ մոլախոտեր են մնում, քան թե

մյուսներից (որինակ, բազմամյա կերախոտերից կամ մշակովիներից հետո, նույնիսկ նրանց կանոնավոր մշակման դեպքում. կորեկը հողից ավելի քիչ խոնավություն ե վերցնում, քան թե, որինակ, սուրբանկան, մանավանդ յերկու անդամ հնձելու դեպքում. արևածաղիկը, յեթե նրան նաճախ միկնույն տեղում ցանենք, սաստիկ կերպով վարակվում ե ճրագախոտվ, այնինչ յեգիպտացորենը կամ հասկավոր հացարույսերը ճրագախոտով չեն վարակվում:

Հասկավոր բույսերը բերքի հետ միասին հողից տանում են շատ սննդարար նյութեր, ինչպես ազոտը, իսկ պատիճագորները (լորի, սոյա, առվույտ և մյուսները) ընդունակ են հողը պարարտացնել աղոտով:

Մշակովիների, մասնավորապես բամբակենու, հաճախ միենույն տեղում մշակելը յերկրամասի հարավ-արևելյան ռայոններում, հողը փոշիացնում ե, իսկ բազմամյա կերախոտերը (առվույտ, եսպարցեա և ուրիշները) վերականգնեցնում են հողի կառուցվածքը, — փոշիացած դրությունից դարձնում են հողն ավելի մանրագնտիկ և դրանով ել ավելի բերքատու:

Այդ պատճառով ել գյուղատնտեսական բույսերի բերքը զանազան նախորդներից հետո խիստ տարբերվում ե իր բարձրությամբ և վորակով:

Այսպես, կուրանի փորձնական կայարանի տվյալների համաձայն, աշնանացան ցորենի բերքը 6 տարվա ընթացքում միջինն ստացվել ե.

Արևածաղից հետո . . . . 20,0 ցենտներ հեկտարից

Սուրբանկայից . . . . 17,4 » »

Գարնանացան ցորենից հետո . 14,8 » »

Բոստով-Նախիջևանի փորձնական կայարանում գարնանացան ցորենը 10 տարվա ընթացքում տվել ե բերք միջին հաշվով.

Յեղիպտացը հետո 7,0 ցենտներ հեկտարից

Գարուց » 4,2 » »

Գարնանացան ցորենից » 3,8 » »

Բոլոր կուլտուրաների բերքի բարձրացման համար հարկավոր ե նրանց հաջորդականությունն այնպիս կառուցել (ցանքսափիխությունը), վորպեսզի յուրաքանչյուր կուլտուրա ստանա հարմարագույն նախորդների տեղը, վորոնք նրա համար զարգացման ավելի լավ պայմաններ են ստեղծում:

Կուլտուրաների այդպիսի հաջորդականությունը, վորոնքալինովում ե բերքի ընդհանուր բարձրացումը, սահմանում ե կանոնավոր կառուցված ցանքսաշրջան:

Սակայն կուլտուրաների հաջորդականությունը միայն նախորդների վորակին նայելով սահմանել չի կարելի: Մենք պլանային տնտեսություն ենք վարում: Մեր սոցիալիստական տնտեսության համար զանազան կուլտուրաներ միատեսակ քանակությամբ հարկավոր չեն:

Մոտակա տարիներին Հյուսիսային Կովկասի կոլտնտեսությունները պիտի ցանեն մոտ 3 միլիոն հեկտար աշնանացան ցորեն, և մոտավորապես 1,606 հազար հեկտար գարնանացան ցորեն:

Գարնանացան ցորենի համար լավագույն նախորդը բազմամյա կերախոտերի շերտն ե (3—4 տարվա) կամ ընական թողած տեղը, սակայն անհեթեթություն կլիներ պահանջել վորպեսզի գարնանացան ցորենը ցանքեր միայն թողած հողերի վրա կամ կերախոտերից հետո: Այս ժամանակ պետք է նրանցից միքանի միլիոն հեկտար լիներ, այնինչ բազմամյա կերախոտեր մեր յերկրամասի համար, մոտավորապես, հարկավոր ե 400 հազար հեկտար:

Աշնանացան ցորենը ցելերի վրա ամենաբարձր բերքն ե տակիս, սակայն անհեթեթություն կլիներ պահանջել, վորոլոր աշնանացան ցորենը ցանքեր ցելերի վրա:

Կուլտուրաների կազմը և տարածությունները, վարը պիտի կատարի ընդհանրապես յերկրամասը, ռայոնը կամ առանձին կոլտնտեսությունը, պետք է վորոշվեն բոլոր կուլտուրաների ցանքսի պետական պլանային առաջադրությամբ։ Այդ ժամանակ, ինարկե պետք ենաշվի առնվեն յուրաքանչյուր ռայոնի և կոլտնտեսության կոնկրետ պայմանները (նողը, արտադրության միջոցներով ապահովված լինելը, կենդանաբուծության պահանջը կերերի վերաբերմամբ և այլն)։ Այսպիսով կանոնավոր ցանքսաշրջանը պետք է կառուցվի բոլոր կուլտուրաների ցանքսի պետական առաջադրությունից յեխելով և ապահովել նրանց բերքի բարձրացումը։ Հետո ցանքսաշրջանն այնպես պետք է կազմակերպված լինի, վորոշեսպի կոլտնտեսային բրիգադն ամրանա, վերջնականապես վերացվի դիմազրկությունը հողի վրա, վորպեսզի աշխատանքը, լծկանը, մեքենաները կոլտնտեսություն մեջ ավելի լիակատար կերպով ոգտագործվեն և ըստ հնարավորության հավասարաշափ ծանրաբեռնվեն ամբողջ գյուղատնտեսական տարվա ընթացքում։ Այսպես, որինակ, յեթե վերցնենք այնպիսի ցանքսաշրջան, վորի մեջ 1-ին դաշտը յեփիպտացորենն ե, իսկ 2-րդը աշնանացան ցորեն, դա հարավային ռայոնների համար ազգութեանիկապես լավ կլինի, բայց նաընդունելի չե այն պատճառով, վոր նրա վրա բոլոր գլխավոր աշխատանքներն ընկնում են աշնան։ Լծկանի և աշխատող ձեռների ծանրաբեռնությունը գարնան ավելի ցածր ե, իսկ աշնան չափից դուրս շատ Աշխատանքը և լծկանը ռացիոնալ կերպով չպիտի ոգտագործվեն։

Այսպիսով, կանոնավոր ցտեմաւորշան կոլտնտեսության մեջ կարելի լի համարել այնպիսի ցանքսաշրջանը, վորը՝ նախական բյուջեում ե բոլոր կուլտուրաների ցանքսի պետական առաջադրությունից։

Եթերորդ՝ այս կուլտուրաների այնպիսի հետքահանություն և առհմանում, վարը վարու ազրաւեխնիկական կանոններ պահ-

պաներու դեպքում ապահովամ և բայօր կուլտուրաների բերքի բարձրացումը յեկ առաջին հետքին սվյալ կոլտնտեսության համար ինմենական կուլտուրաներինը։ Յերբորդ՝ անհրաժեշտ պայմաններ և ստեղծում կոլտնտեսության մեջ արտադրության միջների ավելի լիակատար ոգտագործման յեկ կոլտնտեսային աշխատանքի արտադրության բարձրացման համար։

### 3. Ի՞ՆՉՊԻՍԻ ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆՆԵՐ ԵՆ ՄՏՏՎՈՒՄ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Մեր յերկրամասի կոլտնտեսությունները ցանքսաշրջաններն սկսեցին մտցնել 1932 թվի վերջերին։ Շատ ռայոններում գարնանացանի կամպանիային մոտիկ արդեն իսկականում կորված եյին ցանքսաշրջանի դաշտերը և բրիգադային հողաբաժինները, կոլտնտեսությունների մեծամասնությունը ցանել եր գարնանացանը ցանքսաշրջանի դաշտերին հետևելով։ Սակայն ցանքսաշրջանների դաշտերին կարելի յեր հետևել մասամբ միայն, վորովհետև աշնանացան կուլտուրաները 1932 թ. աշնան արդեն ցանքած եյին տուանց դաշտերի հաշվառքի։ Աշնանանավար քիչ եր արված, դարնանացան հասկավոր կուլտուրաները հարկ յեղած ցանել վոչ այստեղ, վորտեղ հարկավոր եր ըստ ցանքսաշրջանի, այլ այստեղ, վորտեղ հարմար, ավելի մաքուր հող կար։

Բացի դրանից, հաճախ ցանքսաշրջանները նախագծվում և կտրվում եյին իսկականում անկանոն։ Ընդունվում եյին ցանքսաշրջաններ, վորտեղ հացարույսը հացարույսի հետեւից գնում եր մինչև 5 տարի շարունակ, հաշվի չեր առնվազում կենդանաբուծությունը, թույլարվում եր կոլտնտեսային բրիգադի բեկում, դաշտերի և բրիգադային հողաբաժինները կարվում եյին առանց հաշվի առնելու մի շաբթ մոմենտներ։ Միքանի դեպքերում ել, հակառակ կուտակցու-

թյան և կառավարության պահանջներին, ընդգծվում եր համբկային կուլտուրաների կրթատում:

Ի՞նչպիսի պահանջներին պետք է բավարարեն ցանքսաւրանները:

ԽՍՀՄ-ի կԳԿ-ի 33 թվի հունվարի 30-ի վորոշումով, այդ պարզ կերպով վորոշված եւ «Մացվող ցանքսաշրջանները պետք եւ ապահովեն հատիկային հողամասի գոյություն ունեցող չափերի պարտադիր պահպանումը, իսկ մի շարք ուսուուններում հատիկային հողամասի աճը, լավ նախորդների ցանքսը հատիկայիններից առաջ, կեղտոտված հողերի նախորդ ցել դարձնելը, կերային բազայի աճը կենդանաբուծության համար, տեխնիկական և մշակովի կուլտուրաների ծանրաբեռնվածության պակասեցումը հատիկային շրջաններում, միաժամանակ նրանց բերքատվության աճումով»:

Յենիւով կառավարության այս դիրեկտիվից և ցանքսերի տարածության վերաբերյալ այն առաջադրություններից, վորոնք սահմանված են յերկրամասի, ույունների համար, կոլտնտեսություններում հենց մտցվում են համապատասխան ցանքսաշրջաններ:

Ծանոթ կողմանական մացվող ցանքսաշրջանների սքեմաների և նըստացած ձևափոխությունների թիվը շատ եւ ներքեւում մեջ են բերքում միայն հիմնական հատիկային ցանքսաշրջանները:

Ցանքսաշրջանների բնորոշումը արվում եւ միայն հասկավորների և մասնավորապես, աշնանացանների ընդհանուր զետեղման աեստիետիք:

## ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ՄԱՍԸ

Պատկանում եւ յերաշային կիխայական գոնային

ՈՌՅՈՒՆՆԵՐԻ Վյոշեթակիյ, Վ. Դոնակյա, Լ. Կալիտվենակիյ, Միլիքալակիյ, Տարառվակիյ, Կամենակիյ, Շախտիմակիյ, Որլիկակիյ, Կանտանատինովսկիյ:

Այս ույունները բնորոշվում են հասկավոր կուլտուրաների ցանքսերի տարածության շատ բարձր առկոսով: Հիմնական կուլտուրաներն են գարնանացան ցորենը և հաճարը:

Մշակովիների քանակն, առանձնապես այս զոնայի արևելյան մասում, համեմատաբար մեծ չե:

Դաշտավայրական բնույթին բավարարում են յեկ ցանքսաշրջանները:

### I. Վեցադաշտ

1. Ցել, արևածաղիկ
2. Աշնանացան ցորեն և հաճար
3. Գարնանացան ցորեն
4. Յեղիպտացորեն և ուրիշ կուլտուրաներ
5. Գարնանացան ցորեն
6. Հաճար և գարնանացան վարսակ և գարի:

### II. Վեցադաշտ

1. Ցել, արևածաղիկ
2. Աշնանացան ցորեն և գարնանացան ցորեն
3. Հաճար
4. Գարնանացան ցորեն, վարսակ, գարի
5. Յեղիպտացորեն և ուրիշ մշակովիներ
6. Գարնանացան ցորեն:

### III. Յոթադաշտ

1. Ցել, արևածաղիկ
2. Աշնանացան ցորեն, գարնանացան ցորեն
3. Հաճար
4. Գարնանացան ցորեն
5. Յեղիպտացորեն, սորգու և ուրիշ մշակովիներ
6. Գարնանացան ցորեն
7. Հաճար, գարի, վարսակ:

### IV. Քառադաշտ

1. Ցել, արևածաղիկ

2. Աշնանացան ցորեն, գարնանացան ցորեն
3. Հաճար
4. Գարնանացան ցորեն, գարի, գարսակ:

Վեցադաշտը տալիս է 66% հասկավորներ, յոթնադաշտը 71% և քառադաշտը՝ 75% ցանքսաշրջանի՝ տարածությունից: Գարնանացան ցորեն պիտի ցանվի առաջին վեցադաշտում 33%, մնացած ցանքսաշրջաններում մոտավորապես 40%:

Լավագույն տեղերը հատկացված են ավելի արժեքավոր կուլտուրաներին: Մշակովիներն անցնում են գարնանացան ցորենի տակ և մաքուր ցելերը՝ աշնանացան ցորենի տակ:

Աշնանացաններն այստեղ կանուխ են ցանվում, դեռ ևս մինչև հիմնական մշակովիների — արևածաղկի և յեգիպտացորենի — հավաքելը: Այդ պատճառով աշնանացան ցորենն այս զոնայում պետք է ցանվի միայն ցելի մեջ:

Աշնանացան հաճարը, իբրև ավելի սակավարժեք և միենալույն ժամանակ ավելի դիմացկուն կուլտուրա, շատ հաճախ պիտի ցանվի ցորենից հետո (գարնանացան և աշնանացան): Միայն այս զոնայի հարավային մասում կարող է հաճարի ցանքը կատարվել արեածաղկից հետո: Այս խմբի (Ոբլիվուկու, Մորոզովսկու, Տացինսկու, Ցիմլյանսկու) արևելյան ռայոններում հաճարի մի մասը պետք է ցանվի նույնպես մաքուր ցելերի մեջ:

Բոլոր մեջ բերված ցանքսաշրջաններում, բացի առաջին վեցադաշտից, հասկավորները գնում են իրար հետևից յերեք տարի շարունակ:

Այս առաջ ե գալիս հասկավոր հացարույսերին և ասենից առաջ գարնանացան ցորենին բարձր տեսակարար կշիռ տալու անհրաժեշտությունից: Սակայն այսպիսի հերթականություն (յերեք հացարույսերից) թույլատրվում է միայն անհրաժեշտ պայմանով, վորպեսզի այս դաշտերից միշնը ամբողջապես բռնված լինի հաճարով:

Կանոնավոր մշակման և իր ժամանակին ցանելու դեպքում, հաճարը հրաշալի կերպով զարգանում է աշնան, կանուխ սկսում ե աճել գարնան և լավ կերպով խեղդում ե մոլախոտերը: Շատ մոլախոտեր հաճարի մեջ կամ բոլորովին չեն ծաղկում, կամ չեն հասնում սերմավորման՝ մինչև հաճարի հավաքելը:

Այդ պատճառով կանոնավոր ազրոտեխնիկայի դեպքում, հացարույսից հետո ցանված հաճարը վոչ միայն ընդունակ է բարձր բերք տալ և ինքն ևս լավ նախորդ է հանդիսանում գարնանացան հացարույսերի համար:

## ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՏԻԿԱՅԻՆ ՄԱՍԸ

Անկայուն խոնավացման գոնան

ԹԱՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ա Նովոչերկասկի, Մատվ-Կուրգանի, Տագանրոսի, Ազավի, Մյասնիկյան, Կաշչավկայի, Մեջյոտինսկի, Սալսկի:

բ Յեյսկի, Ստարո-Մինակոյ, Կամենվակի, Պավլովսկի, Բելօգլիմսկի, Տիգորեցկի, Նովո-Պոկրավկայի:

Հասկավոր հացարույսերն այս ռայոնների ցանքսերի տարածության մեջ բռնում են 61—64%: Ավելի դեպի հարավ գալով գարնանացան ցորենը և հաճարն աստիճանաբար տեղի յեն տալիս աշնանացան ցորենին: Գարնանացան ցորենի տոկոսը 36—33% ից (Նովոչերկասսկի, Մատվ-Կուրգանի ռայոնները) ընկնում և մինչև 19% ից (Տիգորեցկի), բայց փոխարենը բարձրանում է աշնանացան ցորենը՝ 16% ից (Նովոչերկասկի) մինչև 45% (Տիգորեցկի ո.): Աշնանացան հաճարը ցանվում է քիչ չափով (3—7%) այս զոնայի միայն հյուսիսային ռայոններում: Ամրող ցորենը — աշնանացանը և գարնանացանը միասին — ցանքսաշրջաններում բռնում են 53—56%: Այս ռայոնների մասին կարելի յետ ասել, վոր սա ցորենի իսկական շտեմարանն է: Մրա համապատասխան ել կառուցված են ցանեսաւորչաները:

I. Վեցադաշտ

1. Յել և արևածաղիկ
2. Աշնանացան ցորեն
3. Գարնանացան ցորեն
4. Յեղիպտացորեն և ուրիշ մշակովիներ
5. Գարնանացան ցորեն
6. Գարի, վարսակ և կերախոտեր.

II. Վեցադաշտ

1. Յել և արևածաղիկ
2. Աշնանացան ցորեն
3. Գարնանացան ցորեն
4. Յեղիպտացորեն և ուրիշ մշակովիներ
5. Գարնանացան ցորեն
6. Աշնանացան ցորեն, գարի և վարսակ:

III. Վեցադաշտ

1. Արևածաղիկ և ուրիշ վաղ մշակովիներ
2. Աշնանացան ցորեն
3. Գարնանացան ցորեն
3. Յեղիպտացորեն, գենազերչակ և կերախոտեր
5. Գարնանացան ցորեն, գարի, վարսակ
6. Աշնանացան ցորեն:

IV. Վեցադաշտ

1. Արևածաղիկ և ուրիշ վաղ մշակովիներ
2. Աշնանացան ցորեն
3. Աշնանացան ցորեն
4. Յեղիպտացորեն, գենազերչակ
5. Գարնանացան ցորեն
6. Աշնանացան ցորեն, գարի, վարսակ:

V. Հնգադաշտ

1. Յել արևածաղիկ
2. Աշնանացան ցորեն
3. Գարնանացան ցորեն, գարի, վարսակ
4. Յեղիպտացորեն և կերախոտեր
5. Գարնանացան ցորեն:

VI. Հնգադաշտ

1. Արևածաղիկ և ուրիշ վաղ մշակովիներ
2. Աշնանացան ցորեն
3. Յեղիպտացորեն, գենազերչակ, ուրիշ մշակովիներ և կերախոտեր
4. Գարնանացան ցորեն և գարի
5. Աշնանացան ցորեն:

I — IV վեցադաշտ ցանքսաշրջաններում, նույնպես, ինչպես և V — VI հնգադաշտերում պարզ յերեսում ե, թե ինչպես աշնանացան ցորենը դուրս է զցել գարնանացան ցորենին:

Ծույց տրված բոլոր ցանքսաշրջաններում մշակովիների մի դաշտը կազմվում է ցելից և վաղ մշակովիներից, գլխավորապես արևածաղիկից, և ամբողջովին պետք է անցնի աշնանացան ցորենի տակ: Իսկ մշակովիների յերկրորդ դաշտը բռնվում է յեղիպտացորենով, գենազերչակով, ուրիշ մշակովիներով (որինակ՝ շաքարի ճակնդեղ, Տիխորեցկի ռայոնում) և կերախոտերով: Այս մշակովի կուլտուրաները հասնում և հավաքվում են վոչ այնքան վաղ, վորպեսզի նրանց տեղը կարելի լինի ժամանակին աշնանացան ցորենը ցանել: Այդ պատճառով նրանք ցանքսաշրջանի մեջ անցնում են գարնանացան հասկավորների տակ և այս գեպօռում աշնանացան հացարույսերի տեղը: Կանոնավոր և իր ժամանակին աղբոտեխնիկան թույլ և տալիս այս ցանքսաշր

Ղանճերում (աշնանացան ցորենն և գարնանացանից հետո գալիս, թե գարնանացանը աշնանացանից) ապահովել բերքատվության ընդհանուր բարձրացումը:

Նովչերկասսկի, Մատվ-Կուրգանի, Մէջոտինսկի և Սալսկի ռայոնների մի քանի կոլտնտեսություններում, վորածեղ հաճար և ցանվում, մտցվում են նույնպիսի ցանքսաշրջաններ հաճարով, ինչպես և Յերկրամասի նախընթաց հյուսիսային մասում:

## ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍԸ

### Պատկանում և խոնավ կլիմայական գոնային

ՇԱՑՈՒՆԵՐՆ ԵՆ Բրյուխովեցկիյ, Տիմշավսկիյ, Սլավյանսկիյ, Կրասնոդարի, Ալեքսեյ, Ռոստ-Լարայի, Կորեմավսկիյ, Վանվակիյ, Կրապուտկինսկիյ, Կուրգանսկիյ, Արմավրի, Լարայի, Բելորեչիմսկիյ, Մայկովի, Ռոտարմենսկիյ, Նեվիլիմումսկիյ:

Սրանք աշնանացան ցորենի ռայոններն են, վորը նրանց մեջ բռնում և միջին հաշվով ցանքսային տարածության  $47^{\circ}/0$ -ը: Իսկ բոլոր հասկավոր հացաբույսերը ցանքսային տարածության  $56^{\circ}/0$ -ը:

Միենույն ժամանակ այստեղ շատ բարձր տեսակարար կշիռ ունեն մշակովի հատիկայինները և զանազան տեխնիկական կուլտուրաները:

Այս զօնայում նիմնական նատիկային ցանքօաւցաններն են.

### I. Հն գ ա դ ա շ ա մ

1. Վաղ մշակովիներ
2. Աշնանացան ցորեն
3. Ուշ մշակովիներ և կերախոտեր
4. Աշնանացան ցորեն և գորշ հացաբույսեր
5. Աշնանացան ցորեն.

### II. Վ ե ց ա դ ա շ ա մ

1. Վաղ մշակովիներ
2. Աշնանացան ցորեն
3. Աշնանացան ցորեն
4. Ուշ մշակովիներ
5. Աշնանացան ցորեն, գորշ հացաբույսեր և կերախոտեր
6. Աշնանացան ցորեն:

### III. Կ ա մ թ ե վ ե ց ա դ ա շ ա մ ուրիշ կ ա ռ ու ց վ ա ծ ք ո վ

1. Վաղ մշակովիներ
2. Աշնանացան ցորեն
3. Աշնանացան ցորեն
4. Ուշ մշակովիներ
5.  $1/2$  դաշտը աշնանացան ցորեն և  $1/2$  դաշտը գարի
6.  $1/2$  դաշտը գարի և  $1/2$  դաշտը աշնանացան, ցորեն:

Մշակովի կուլտուրաների ավելի բարձր տոկոս ունեցող կոլտնտեսություններում մտցվում են.

### IV. Ց ա ն ք ս ա շ ա ն ն ե ր: Ք ա ռ ա դ ա շ ա մ ե ր

1. Վաղ մշակովիներ
2. Աշնանացան ցորեն
3. Ուշ մշակովիներ և կերախոտեր
4. Աշնանացան ցորեն և գորշ հացաբույսեր:
5. Վ ե ց ա դ ա շ ա մ ե ր
6. Արևածաղիկ
7. Աշնանացան ցորեն
8. Յեգեպտացրեն
9. Աշնանացան ցորեն
10. Գենագերչակ և ուրիշ մշակովիներ
11. Գորշ հացաբույսեր և աշնանացան ցորեն:

ԲԻBLIOOTEKA  
Института  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Российской Академии Наук  
СССР

VI. Կամ թե յոթնադաշտ ա այսպիսի կազմով

1. Արևածագիկ
2. Աշնանավար ցորեն
3. Յեգիպտացորեն
4. Աշնանացան ցորեն
5. Գենագերչակ և ուրիշ մշակովիներ
6. Գարի
7. Աշնանացան ցորեն:

Մեջ բերված ցանքսաշրջաններում հասկավոր հացաբույսերը կարող են բռնել ցանքսաշրջանի տարածության 36-ից մինչև  $50^{\circ}/\text{o}$ -ը, իսկ մշակովիները՝ համապատասխան կերպով՝ 33-ից մինչև  $50^{\circ}/\text{o}$ -ը:

Յերկրամասի այս մասում աշնանացաններն ավելի ուշ են ցանքում, քան թե նախորդ կենտրոնական մասում։ Մշակովիները հավաքելուց հետո, աշխատանքը ժամանակին կատարելու դեպքում, բավականաչափ ժամանակ է մնում, վորպեսզի հողը նորմալ ժամկետերին պատրաստ լինի աշնանացանները ցանքելու։ Այդ պատճառով ամենաքիչը մշակովիների  $75^{\circ}/\text{o}$  պետք է անձնի աշնանացան ցորենի տակ։ Յեվմիայն այնպիսի կուլտուրաներ, ինչպես բամբակենին (Սլավյանների ու յոնում) լուր տվողները, շաքարի ճակնդեղի մի մասն անցնում են գարու տակ։

Այն ցանքսաշրջաններում, վորտեղ հասկավորները բունում են տարածության  $50^{\circ}/\text{o}$ -ից ավելի, աշնանացան ցորենի դաշտի  $1/2$ -ը կամ ամբողջ դաշտը (ուրիշ խոսքերով, ցանքսաշրջանում յեղած բոլոր ցորենի  $25 - 30^{\circ}/\text{o}$ -ը) զնում ե աշնանացան ցորենից հետո։

Հողագործներից, հաճախ ել ազրոնումներից, կարելի յե հակածառություններ լսել աշնանացան ցորենի յերկու տարի իրար հետեւից ցանելու դեմք յերկյուղ, վոր այդպիսի հաջորդականությունը հասցնի մոլախոտերի և վնասատուների բազմացման։

Այսպիսի պատճառաբանությունները հենվում են վերջին տարիների փաստերի վրա, յերբ խակապես ցորենը ցորենի հետեւից աղտոտվում եր և նրա վրա բազմանում ելին վնասատունները (որինակ հացահատիկային բղեղը): Սակայն վնասատունների և մոլախոտերի բազմացումն առաջանում եր վոչ թե ցորենի յերկու աարի շարունակ իրար հետեւից ցանելուց, այլ նրանից, վոր ցորենը շատ տարիներ շարունակ ցանվել եր իրար հետեւից և այն ել առանց վորեւե աղբոտեխնիկային, յերբեմն ել վնասակար կուլտակային շագրոտեխնիկայով։

Մշակովի կուլտուրայի լավ մշակումն աշնանացան ցորենի առաջին դաշտի համար, բերքահավաքից հետո հնձված արտերի ծանծաղավարը, և հետագա ցանքսից առաջ կատարված խոր վարելն աշնանացան ցորենի յերկրորդ դաշտի համար և ժամանակին ցանելը, հեռացնում են կեղտոտելու և վնասատունների շատանալու վտանգը և ապահովում են ցորենի բարձր բերքը։

Այս զոնայի հարավում (Մայկոպի, Բելորեչենկի ու յոններ) գիմացկուն կը բարով ձմեռում է աշնանացան գարին։ Այդ պատճառով, այնտեղ, վորտեղ կազմակերպչական-տնտեսական կարգի տեսակետից (ոգտագործել աշունը, ավելի թեթևացնել գարունը) այդ նպատակահարմար է, ավելի լավ է գարնանացան գարին փոխարինել աշնանացանով։

## ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏԿԱՅԻՆ ՌԱՅՈՆՆԵՐԸ

### Անկայուն խոնավացման զոնաները

ՌԱՅՈՆՆԵՐԻ ԵԽ ա) Մեդվիժենսկի, Նովօ-Ալեքսանդրովլսկի, Խօգորելեռ-Տէչինսկի:

բ) Նոտավոլովի, Էնուրսավոլովի, Հաթեյին-Զրերի, Գեորգիեվոլովի, Ալեքսանդրովովի:

Հասկավոր հացարույսերը բունում են ցանքսի տարածության  $57 - 60^{\circ}/\text{o}$ -ը, իսկ աշնանացան ցորենը  $40 - 45^{\circ}/\text{o}$ ։

Մեղվեժենսկիյ և հզորինո-Տիշենսկիյ ռայոններում տարածության  $70^{\circ}/0$ -ն անցնում է գարնանացան ցորենի տակ: Հիմնական մշակովիներն են արեածաղիկը և յեղիպտացորենը: Ցելը մտցվում է ցանքսաշրջանի տարածության  $6 - 10^{\circ}/0$ -ի չափով:

Տիպային ցանքսաշրջանները կլինեն հետևյալները՝

### I. Վ. Ե ց ա դ ա շ տ

1. Ցել արեածաղիկ
2. Աշնանացան ցորեն
3. Աշնանացան ցորեն
4. Յեղիպտացորեն, ուրիշ մշակովիներ, կորեկ
5. Գարնանացան համակավորներ (գարի, գարնանացան ցորեն) և աշնանացան ցորեն
6. Աշնանացան ցորեն և գարի:

### II. Հ ն դ ա դ ա շ տ

1. Ցել արեածաղիկ
2. Աշնանացան ցորեն
3. Յեղիպտացորեն և ուրիշ մշակովիներ
4. Համակավոր գարնանացաններ, աշնանացան ցորեն
5. Աշնանացան ցորեն:

Կուլտուրաների հերթականությունը ցանքսաշրջանների մեջ նման է կուրանի զոնային: Սակայն այսուել աշնանացանները պետք են նորմալ կերպով ավելի առաջ ցանվեն, քան թե կուրանում և յեղիպտացորենը աշնանացանների համար իբրև նախորդ՝ դառնում են արդեն անհուսալի:

Ստավրոպոլի փորձնական կայարանի յեղիպտացորենի համաձայն, աշնանացան ցորենի բերքը գարուց հետո պակաս չե, այլ մինչև իսկ 10 տոկոսով ել ավելի բարձր են յեղիպտացորենից հետո ցանվածների բերքից, վորովհետեւ յեղիպ-

տացորենն ուշ հավաքելու պատճառով, հարկ է լինում ցորենն ավելի ուշ ցանել: Վոչ պակաս հաջողությամբ կարող են գնալ և ցորենը ցորենից հետո: Սակայն այստեղ առանձնապես պետք են լնդգծել ազգությունների համակությունը, վորովհետեւ այս ռայոններում համեմատաբար ավելի շատ են տարածված ցորենի ֆլամանգունները՝ գեսահնյան և շվեդական հանձերը:

### ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍԸ

Յերաշային յել չափազանց յերաշային զոնա

ա) ՀՅՈՒՍՅԱ-ԱՄԵՎԵԼՅԱՆ ՌԱՅՈՒՆԵՐՈՒՄ Ինժնուտինսկի, Զիմովիկովակիյ, Կալմիկյան, Պրոլետարակիյ:

Համակավոր հացարույսերը բռնում են ցանքսերի տարածության  $66^{\circ}/0$ -ը: Աշնանացան ցորենի ցանքսերը կատարվում են մաքուր ցելի վրա և լնդգծվում են փոքր չափերով  $2^{\circ}/0$ -ից (Կալմիկյան ռայոն) մինչև  $13^{\circ}/0$  (Պրոլետարական ռայոն): Մշակովի կուլտուրաներ քիչ են: Ցելը բռնում է ցանքսաշրջանի մեջ տարածության  $12 - 16^{\circ}/0$ -ը:

Աշնանացանների  $40^{\circ}/0$ -ից ավելի կատարվում են ցելի վրա: Բացի դրանից, համակավոր հացարույսերի հիմնական նախորդները հանդիսանում են կորեկը, մանանեխը, սորգոն, բռնուանները և յեղիպտացորենը:

Տիպային ցանքսաշրջաններ այս ռայոնների համար:

### I. Վ. Ե ց ա դ ա շ տ

1. Ցել կորեկ
2. Հաճար
3. Գարնանացան ցորեն
4. Մշակովիներ
5. Գարնանացան ցորեն
6. Հաճար և գարի:

## II. Վեցադաշտաշտ

1. Ցել
2. Աշնանացան ցորեն
3. Գարի, գարնանացան ցորեն
4. Կորեկ, բոստան
5. Հաճար
6. Գարնանացան ցորեն:

թ) ՀԱՐՄՎ.-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲԱՄԲԱԿԻ ՌԱՅՈՆՆԵՐԸ Վիճողելակիյ, Թուրք-մեծակիյ, Պետրովակիյ, Բագրուարնենակիյ, Պրիկումսկիյ, Վարոնցովո-Սլեխանդրովսկիյ, Մոգդոկսկիյ:

Հասկավոր հատիկային հացաբույսերը բռնում են ցանք. սի տարածության  $50^{\circ}/_0$ -ը, վորի թփում աշնանացան ցորենը բռնում է  $35^{\circ}/_0$ -ը: Ցելի համար հատկացվում է մշակվող տարածության  $15^{\circ}/_0$ -ից ավելին, վորն ամենաբարձր տոկոսն է կազմում ամբողջ յերկրամասում:

Մշակովիների հողամասում հիմնական կուլտուրան բամբակենին ե, միջին թփով ցանքսի տարածության  $8^{\circ}/_0$ -ը: Յեզիպատացորենը սորգոյի հետ միասին բռնում են  $50^{\circ}/_0$ -ից քիչ և արևածաղիկը  $2^{\circ}/_0$ -ից քիչ:

Հիմնական ցանքաբաներն են.

## I. Վեցադաշտաշտ

1. Ցել
2. Աշնանացան ցորեն
3. Կորեկ և մշակովիներ
4. Աշնանացան ցորեն
5. Մշակովիներ և կերախոտեր
6. Աշնանացան ցորեն և գորշ հացաբույսեր:

## II. Վեցադաշտաշտ

1. Ցել

## 2. Աշնանացան ցորեն

3. Բամբակենի
4. Գորշ հացաբույսեր
5. Կորեկ, բոստան, կերախոտեր
6. Աշնանացան ցորեն:

## III. Հնգադաշտաշտ

1. Ցել
2. Աշնանացան ցորեն
3. Բամբակենի
4. Գորշ հացաբույսեր
5. Աշնանացան ցորեն և աշնանացան գարի:

Աշնանացան ցորենը ցանքում է ցելից, կորեկից, բոստանից և մշակովիներից հետո և քիչ քանակությամբ է դարուց հետո — աշնանացան կամ գարնանացան:

Մոգդոկի, Վորոնցովո-Սլեկսանդրովսկու և մասամբ ել Պրիկումսկու ուայոններում աշնանացան գարին ավելի լավ բերք է տալիս, քանի թե գարնանացանը և հավասար պայմաններում նախապատվությունը պետք է տալ աշնանացան գարուն:

## ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԵՐԸ

Կարաչայ, Զերմեսիա, Խնգուշերիա, Հյուսիսային Ռուսիա, Կարարդիման-Բալկարյան յել Զեշեների ինքնալար մարզերը:

Ինքնավար մարզերում յեզիպատացորենը հանդիսանում է գլխավոր կուլտուրան: Նրանով բռնված է ցանքսի տարածության  $50^{\circ}/_0$ -ը: Նա ներկայացնում է հասկավոր հացաբույսերի համար հիմնական նախորդը, մասնավորապես աշնանացան ցորենի համար, վորն այդ մարզերում բռնում ցանքսերի տարածության  $13 - 18^{\circ}/_0$ -ը (բացի ինգուշեթիայից, վորտեղ ցորենը բռնում է միայն մոտ  $2^{\circ}/_0$ ):

Հասկավոր հացաբույսերով ցանքացը անենք կարգ են  
լինել հետեւյալները —

I. Հնդադաշտառ

1. Յեղիպտացորեն
2. Աշնանացան ցորեն
3. Յեղիպտացորեն
4. Աշնանացան գարի, զորչ հացաբույսեր
5. Յեղիպտացորեն և ուրիշ մշակովիներ:

II. Հնդադաշտառ

1. Յեղիպտացորեն և ուրիշ մշակովիներ
2. Աշնանացան ցորեն
3. Յեղիպտացորեն
5. Ազատ հողամաս (կերախոտեր, գետնատանձ):

III. Վեցադաշտառ

1. Յեղիպտացորեն
2. Յեղիպտացորեն
3. Աշնանացան ցորեն
4. Յեղիպտացորեն
5. Յեղիպտացորեն
6. Կերախոտեր:

IV. Հնդադաշտառ

1. Յեղիպտացորեն
2. Յեղիպտացորեն
3. Կարտոֆիլ
4. Աշնանացաններ
5. Յեղիպտացորեն:

#### 4. ԱՇԽԱՏԱՑԱՆԵՐԻ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ ՅԵՎ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆՈՒՄ

Թէ ինչպիսի նախորդներից հետո պիտի ցանվեն աշնանացանները ցանքսաշրջաններում, մենք վերլուծեցինք հիմնական հատիկային ցանքսաշրջանների քննության ժամանակ:

Հանարի համար հյուսիսում՝ գարնանացան ցորեն և քիչ չափով արևածաղիկը:

Արևելյան ույաններում՝ ցելը, կորեկը, բոստանները և գարնանացան հատիկավորները:

Աճանացան զարենի համար՝ հյուսիսում և հյուսիսարեւ վելքում անբացառապես մաքուր ցելը:

Կենարոնական հատիկային ույաններում՝ ցելը, վաղ մշակովիները, գարնանացան ցորենը և գարին:

Յերկրամասի հարավային մասում՝ մշակովիները, վաղ և ուշ քիչ չափով՝ հասկավոր հացաբույսերը (աշնանացան ցորեն և գարի):

Հարավ՝ արևելքում՝ ցելը, կորեկը, մշակովիները և վորոշմասում ել աշնանացան և գարնանացան գարին:

Ազգային մարզերում՝ յեղիպտացորենը և կարտոֆիլը:

Աճանացան զարու համար՝ հարավային, հարավարևելյան ույաններում ուշ մշակովիները և հասկավոր հացաբույսերը (աշնանացան ցորենը):

Այսուղ ցույց են տրված միայն հիմնական նախորդները, վորոնք բանում են մեծ տարածություններ:

Սակայն ցանքսաշրջաններում պիտի ցանվեն և ուրիշ յերկրորդական կուլտուրաները: Անհրաժեշտ են նույնապես իմանալ նրանց վորակն ևս, իբրև զանազան բույսերի համար նախորդներ, մասնավորապես աշնանացան հացաբույսերի համար, վորպեսզի ճիշտ կերպով զետեղենք բոլոր կուլտուրաները ցանքսաշրջանում:

Մոտակա տարիներին, ցանքսաշրջանի անցողական մոմենտին, հարկ է լինում անխուսափելիորեն պատահել աշնանացանների ուրիշ նախորդներից հետո ցանելուն, քան սահմանված է այդ ցանքսաշրջանով:

Առանձնապես 1933 թ. աշնան ցանքսի ժամանակ, յերբ սկսվում է անցումը՝ գոյություն ունեցող այլ և այլ գաշտաբերից դեպի կանոնավոր ցանքսաշրջանը, հարկ է լինում գործ ունենալ աշնանացան հացարույսերի ամենատեսակ նախորդների հետեւց կուտակված ցանքսերի հետ:

Այդ պատճառով շատ կարենու և վորոշել և իմանալ զանազան կուլտուրաների արժեքը, իբրև աշնանացանների նախորդների և մատնանշել վճռական ազրոտեխնիկական միջոցառումների վրա, վորոնք կհարթեյին վատ նախորդների անբարենպաստ ազդեցությունը:

Քննենք այս ըստ կուլտուրաների և յերկրամասի զոնաների:

Աւելացան համար: Դոնեցկի փորձնական կայարանը 9 տարվա ընթացքում միջին՝ հաշվով ցույց է տալիս աշնանացան հաճարի այսպիսի բերքեր:

#### Աղյուսակ № 1

Ցանքարի բերքը	Հաճարի բերքը		
	Ցանքաներ-ներով հեկտ.	%	% -ով
Վաղ, մաքուը ցել . . . . .	18,4	100	
Ուշ ցել . . . . .	14,7	80	
Վեհական ցել . . . . .	12,6	68	
Ածանց ցելի (ցանած, գարուց հետո տափան անելով) . . . . .	7,1	39	

Այս փորձից կարելի յե մի անվիճելի յեղակացություն անել, վոր վաղ մաքուը ցելն ապահովում է աշնանացան

հաճարի ամենաբարձր բերքեր: Սակայն այն ուսյոններում, վորաեղ հաճար են ցանում, այս ընթացիկ տարում ցելիք քիչ են վարված և նրանցից մի մասն ել զրա հետ պետք և բոնված լինի աշնանացան ցորենով: Այդ պատճառով աշնանացան հաճարը գլխավորապես պիտի ցանվի գարնաւացան հացարույսերից հետո:

Ցանքոք սրտի, փորձնական կայանները հատկապես չեն զբաղվել հասկավոր հացարույսերի, իբրև հենց հասկավորուների նախորդների, ուսումնասիրությամբ, սակայն յեղած տվյալներն ել թույլ են տալիս մի քանի եյական յեղբակացություններ անել:

Հաճարի բերքի խոշոր տարբերությունն անցել դաշտում տափանով ցանքած, դեմքում համեմատած վոչ միայն ուշ (հուլիսյան) ցելի, այլ նույնիսկ վեհայի ցելի հետ, հիմք ե տալիս յեղակացնելու, վոր վճռական նշանակություն ունի աշնանացանի համար հողի պատրաստելը: Փորձի մեջ ցանքսի ժամկետերը միաժամանակ եյին, իսկ դարնանացան հացարույսերի և վեհայի տակ խոնավության քանակի մեջ այնպիսի մեծ տարբերություն լինել չեր կարող: Այստեղից կարելի յե յեղակացություն անել, վոր գարնանացան հնձված արտի մեջ հանարի տափանով ցանեսը անթարաքելիք յե, սակայն գարնանացան հացարույսերից հետո ազատված դաշտի ժամանակին յեկ մանրակրկիտ պատրաստում կարող է տալ հանարի բավականաչափ բարձր բերք:

Ոստառված նախիճանի փորձնական կայարանը վերջին յոթը տարվա ընթացքում փորձել է կատարել այսպիսի ցանքսաշրջաններ:

- 1-ին դաշտը — ցել և զանազան ցելակալ բույսեր
  - 2-րդ դաշտը — աշնանացան հաճար.
  - 3-րդ դաշտը — դարնանացան գարնի
- և ստացել ե 7 տարվա ընթացքում այս ցանքսաշրջաններում հետևյալ բերքերը.

Ցեղակալ բույսը — աշնանացան  
հաճարի նախորդ

Ցեղակալ բույսը (ինոս, համարիկ, պատուղ, ները)	Աշնանացան համարը բերքը	Դաշնանացան համարը բերքը	Գարնանացան կարուղը
Ապրիլան ցեղ . . . . .	—	20,9	20,0
Վիկու վարսակի ցեղ . . . . .	28,5	16,8	20,0
Գարի (առանց ցեղի) . . . . .	14,5	9,4	17,1
Ցեղակալացորեն (ամերիկ. ցեղ) . . . . .	22,4	9,1	16,8
Դդում . . . . .	194,0	7,1	19,2

Ապրիլան ցեղն այստեղ ևս տալիս եւ հաճարի ամենաքարեր բերքը, նրանից հետո գալիս եւ վիկի ցեղը, իսկ յեղիպտացորենի և առանձնապես դդումի ցեղերը վորոշակի կերպով տեղի յեն տալիս զարուն, չնայած, վոր գարու վրա արված այս փորձի մեջ իսկապես հացաբույսը հացաբույսից հետո յեր յեղել: Ցեղիպտացորենը և դդումը խիստ ուշ են հավաքվում և վատ նախորդներ են աշնանացան հաճարի համար, թեև գարնանացան կուլտուրաների համար նրանք հանդիսանում են ամենալավ նախորդներ: Այստեղից կարելի յեն նույնպես յեղրակացություն անել, վոր աշնանացան հաճարի բերքն առաջին հերթին կախված եւ վոչ թե նախորդի հատկությունից, վորը հատուկ եւ նրան իբրև բույսի, այլ հողի այս մշակումից և աշնանացանի ցանքսի ժամկետերից, վորը կարելի յեն աշնանացանին հատկացնել նախորդների հավաքելուց հետո:

Աշնանացան հաճարի գարնանացան բույսերից նետո ցանելու դեպքում, հարկավոր եւ հատուկ ուսադրություն դարձնել հնձված արտի ծանծաղավարի յեվ ցանքսից առաջ իր ժամանակին խօսք վարելու վրա:

Հնձած արտի ծանծաղավարն անհրաժեշտ եւ հացաբույսի հավաքելուց անսիջապես հետո կատարել, վորպեսզի միամյա

մոլախոտերին (մկնախոտ (մբյել), թայլ (լեբեդա), վորոնք կեղտոտում են հացաբույսերը, թույլ չտրվի սերմեր տալ և վոչնչացնել այնպիսի մոլախոտերը. ինչպես առաջին տարվա կորնդանը: Մեր գաշակերի խոշոր չափով կեղտոտվածության և մեծ քանակությամբ վասատուներ լինելու պատճառով, մոլախոտերի վեմ կորիվը պետք եւ անցկացնել ամբողջ տարվա ընթացքում զանազան միջոցներով:

Հնձած արտի իր ժամանակին կատարված ծանծաղավարը հանդիսանում է գաշտերի կեղտոտվածության և վնասատուների գեմ կովի ամենալուրջ միջոցներից մեկը: Բոլոր դեպքերում, վորտեղ այդ հնարավոր ե, անհրաժեշտ ե հընձած արտն այլեւ իբրև մոլախոտերի վոչնչացման խսկական միջոցներից մեկը և առանձնապես զյուղատնտեսական բույսերի մի քանի վնասատուների:

Բայց հնձած արտի վաղ կատարված ծանծաղավարը ուրիշ նշանակություն ել ունի, առանձնապես, հյուսիսային և արևելյան ուսյոններում: Այստեղ աշնանացանի ժամանակին մոտիկ հասկավորների, նույնպես և մշակովիների տակի հողը հաճախ լինում ե շատ չոր: Իսկ ծանծաղավար կատարված գաշտն ավելի լավ ե պահպանում և կուտակում խոնավությունը, թույլ ե տալիս ավելի լավ կատարել նախացանքսի մշակումը և վաղ ցանել աշնանացանները:

Աշնանացան հաճարի մշակովիներից հետո ցանելու գեպքում, անհրաժեշտ ե ամենից առաջ ընտրել վաղ մշակովիները (բուստան, սիլոս) և նույնպես մյուս վաղ հավաքվող կուլտուրաները (կորեկ, մանանեխ):

Սակայն այս ընտրությունը կարող ե շատ սահմանափակ լինել նրանով, վոր այլպիսի կուլտուրաների տարածությունները փոքր են, և նրանով, վոր նրանք իրանց զետեղումով գաշտերի մեջ չեն ընկնի հաճարի տակ: Հարկ ե լինում հաճարը ցանել արևածաղկի տեղում, իսկ տեղ տեղ ել յեղիպտացորենի տեղը: Այսպիսի գեպքերում առանձին ուշա-

դրություն պետք եւ դարձնել մշակովիների ըստ հնարավորության վաղ հավաքելու, նրանց մնացորդները վոչնչացնելու և դաշտն անհապաղ կերպով 15 սմ-ից վոչ պակաս վարելու վրա:

Մշակովիների տակ յեղած դաշտերն, ինչպես նաև ծանծաղավար արված հնձած արտը կրկին անդամ պետք եւ վարել վոչ ուշ, քան ցանքսից 10—15 որ առաջ, վորպեսդի հողը կարողանաբավականաչափ նստել:

Աշնանացան հաճարի ցանքսի ամենալավ ժամանակը պետք եւ համարել ողոստոսի յերկրորդ կեսը — սեպտեմբերի միջիզբը:

Դոնեցկի փորձնական կայարանը 1917 թվին ստացել եւ այսպիսի հետեւանք.

Ցանքսի ժամկետերը	Հաճարի բերքը ցեղանակություն
Ողոստոսի 15-ին	8,0
Սեպտեմբերի 1-ին	7,9
Սեպտեմբերի 15-ին	5,9

Համենայն գեպս աշնանացան հաճարի ցանքսի ուշացումը քերքի խորոր կորուստ ե բերում:

Աօնանացան ցորեն: Յերկրամասի հյուսիսային և հյուսիսարևելյան մասում աշնանացան ցորենը նորմալ կերպով պետք ե ցանքի անբացառապես մաքուր ցելերի վրա, վորովհետև նա աշունքից ընդունակ չե թփուավել և կովել մուգախոտերի և ցուրտ ձմեռների գեմ այն աստիճան, ինչ աստիճանի վոր ընդունակ ե հաճարը:

Աշնանացան ցորենի համար զանազան ցելերի նշանակությունը պարզ ե՝ Դոնեցկի կայարանի 7 տարվա ընթացքում ստացած հետեւյալ տվյալներից (1911—1917 թ.):

Ցեղի տեսակը	Աշնանացան ցորենի բերքը	
	Ցեղաներ հեկտարից	% %
Վաղ մաքուր ցեղ . . . . .	18,3	100
Ուշ ցեղ . . . . .	11,7	69
Աընածաղկի խերսոնի . . . . .	11,5	67
Դրումային . . . . .	11,6	68
Վիկավառակային . . . . .	9,5	55
Առանց ցեղի (դարձնանացան ցորենի տեղը) . . . . .	6,1	35

Աշնանացան ցորենն անբարենպաստ պայմաններին պահի զգայուն ե, քան թե հաճարը: Ցեղե հաճարն ուշ ցեղի վրա պակասեցնում ե բերքը կանուխ մաքուր ցեղի գեմ 25%/<sub>0</sub>, իսկ վիկու վարսակայինի վրա 32%/<sub>0</sub> (տես աղյուսակ № 1), ապա ուրեմն աշնանացան ցորենը միենույն պայմաններում պակասեցնում ե բերքը 31%/<sub>0</sub> և 45%/<sub>0</sub>-ով (աղյուսակ № 3):

Աշնանացան ցորենն ավելի և զգայուն ե յերբ, նա ցանքում ե հասկավոր հացաբույսերից հետո դաշտերի սաստիկ կեղուափածության պայմաննում:

Այդ պատճառով ցանքսաշրջանի անցնելու ժամանակ, հյուսիսային և հյուսիս-արևելյան ույուններում աշնանացան ցորենը պետք ե ցանքի, իբրև կանոն, միայն այն չափով, ինչ չափով վոր նա ապահոված ե մաքուր ցելերով: Ցեղահայն ծայրահեղ դեպքերում, յերբ հարկադրված ցանքում և վոչ ցելերի վրա, ցորենի համար պետք ե ընտրել աշնանացանի զաշտում բոստաններից, մանանեխի, կորեկի և վաղ մշակովիների գաշտերից ավելի մաքուր հողամասերը: Հաճարի համար մատնանշված հողի պատրաստության և ժամանակին ցանքս կատարելու պահանջները մնում են իրանց

ույժի մեջ և մեծ նշանակություն ունեն նաև աշնանացան ցորենի համար, իբրև ավելի պահանջկոտ կուլտուրայի:

Աշնանացան ցորենի ամենալավ ժամկետը, Դոնեցկի փորձ-նական կայարանի տվյալների համաձայն, հյուսիսային ռայոնների համար սեպտեմբերի առաջին կեսն է:

Եթերամասի կեներանական մասում աշնանացան ցորենի ցանքսի ամենալավ ժամկետը սեպտեմբերի յերկրորդ գեկադից է:

Մաքուր ցելը, իբրև աշնանացան ցորենի նախորդ, այս տեղ ևս պահպանում է իր առաջնությունը: Բայց վորով-հետեւ մշակովի և հասկավոր կուլտուրաների հավաքելուց հետո յերկրամասի կենտրոնական մասում ավելի շատ ժամանակ և մնում աշնանացանի հողի պատրաստության համար և անձրեներ ավելի շատ են գալիս, ուստի մշակովի կուլտուրաների, նույնպես և հասկավորների արժեքն, իբրև աշնանացանի նախորդի, բարձրանում է:

Ցեյսկի փորձնական դաշտում 4 տարվա ընթացքուն մաքուր ցելի վրա միջին հաշվով մեկ հեկտարից ստացվել է ցենտաներներով.

Աև ցելի վրա . . . . . 15,2 ցենտաներ

Ապրիլյան ցելի վրա . . . . . 14,5 ցենտաներ

Մայիսյան ցելի վրա . . . . . 15,5 ցենտաներ

Սեպտեմբերյան ցելի վրա . . . . . 9,9 ցենտաներ

Իսկ այնտեղ զբաղված ցելերի վրա աշնանացան ցորենի բերքերը 4 տարվա ընթացքուն միջին հաշվով հետեւյան ե: (տես աղյուսակ № 4):

Վորքան նախորդները դաշտը շուտ են ազատում, այնքան հետեւյալ աշնանացան ցորենի բերքը բարձր է: Այս պատճառներով վորքան դեպի հարավ, այնքան դարնանացան հասկավոր հացարույսերի նշանակությունն ել, իբրև աշնանացան ցորենի նախորդների, բարձրանում է:

Ցելի աեսակը (աշնանացանի նախորդ)	Աշնանացան ցորենի բերքը	
	Ցենտն. հեկտարից	0/0 0/0
Կոխված հողը սեպտեմբերյան ցել . . . . .	12,0	100
Սուդանկա (արոտատեղ) . . . . .	10,0	83
Սուդանկա (իսոտի համար) . . . . .	10,3	86
Ճակնեց . . . . .	11,3	94
Արևածաղկի ցել . . . . .	12,0	100
Բասանի ցել . . . . .	12,7	105
Վիկա-վարսակային ցել . . . . .	12,9	107

Սրանում մեղ համոզում են մեր գյուղատնտեսության պրակտիկան և փորձնական հիմնարկների տվյալները:

Համեմատենք աշնանացան ցորենի տված բերքը միևնույն նախորդներից հետո Դոնեցկի և Ռոստով-Նախիջևանի փորձ-նական կայարաններում:

Աշնանացան ցորենի նախորդ-ները	Դոնեցկի փորձնական կայանը 7 տ. ընթացքում		Բոստով Նախիջևանի փորձնական կայանը 7 տ. ընթացքում	
	Ցենտն. հեկտարից	0/0 0/0	Ցենտ. հեկտ.	0/0 0/0
Վաղ-մաքուր ցել . . . . .	18,3	100	13,6	100
Յեգիպտացորենի ամեներիկ. ցել . . . . .	10,8	59	10,0	73
Առանց ցելի (Դոն. փորձն. կայարանում զարնանացան ցորեն, Բոստ-Նախիջևանի փորձն. կայարանում զարի) . . . . .	6,1	36	7,3	54

Այստեղ յերեսում է, թե ինչպիս ավելի հարավային ռայոնում աշնանացան ցորենի բերքի մեջ զարնանացան հա-

յաբույսից հետո, համեմատած թէ մաքուր ցելի և թէ զբաղ ված ցելի մեջ յեղած բերքի հետ զանազանությունը նեղա նուռ ե:

Այս զանագանությունն ավելի ևս քիչ են կատարում այլևս գեղի հարագ։ Յեսկի փորձնական կայարանը 1927 թ. զանագան նախորդներից հետո աշնանացան ցորենի այսպիսի բերք են ստացել.

### Աղյուսակ № 6

Նախորդներ	Աշխատացան ցորենի բնօքը	
	Ցենտր. հեկտ.	0/0 0/0
Կոխված հողը (սեպտեմբերի յուն ցել)	10,9	100
Ցեղազտացորենի ցել . . . . .	11,2	103
Արևածաղկի ցել . . . . .	10,2	93
Բռնտանի ցել . . . . .	12,8	117
Վեհայի ցել . . . . .	10,8	98
Սուրբանկա (խոս) . . . . .	8,3	66
Սուրբանկա (արոտատեղ) . . . . .	6,7	62
Ճակնդեղ . . . . .	11,6	106
Առանց ցելի (գարել) . . . . .	9,5	87

Աղյուսակից կարելի յե սահմանի, առաջինը, վոր մշակովի կուլտուրաներն աշնանացան ցորենի համար այնպիսի բերք են ապահովում, ինչպես և ուշ մաքուր ցելը (կոխված հողը) և յերկրորդ, վոր աշնանացան ցորենը գարուց հետո կարող ե տալ մշակովիներից հետո ստացված բերքեց քիչ տարբերվող բերք:

Յեթե աշնանացան ցորենի բերքը յեկվատացորենի ամերիկան ցելի մեջ ընդունենք  $100^0/0$ , այն ժամանակ աշնանացան ցորենի բերքը դարնանացան հացաբույսերից հետո հավասար կլինեն — Դռնեցկի փորձն. կայարանինը  $66^0/0$ , Ռոստով-Նախիչևանինը  $70^0/0$  և Յեյսկինը  $85^0/0$ :

Աշնանացան	Աշնանացան			
	Տարեկանի հացաբույսերից	Տարեկանի հացաբույսերից		
Փոլձնական կայարանների անունները	Ցեղիպտացո- րենի ամերիկ. Ցեղի մեջ	Գալնանացան հացաբույսերից հետո		
	Ցեղադ. Հեկտ.	0/0 0/0		
	Ցեղադ. Հեկտ.	0/0 0/0		
Դռնեցկի (7 տարվա ընթացք.) Առատով-Նախչեանի 7 տ. ընթ. Ցեղակի 1927 թ.	10,8 10,0 11,2	100 100 100	6,1 7,3 9,5	56 73 85

Այս ըոլոր տվյալներից յերկրամասի կենտրոնական մասի ռայոնների համար կարելի յէ անել հետևյալ յեզրակացությունները:

Աշնանացան ցորենն ամենաբարձր բերք տալիս եւ վաղ մաքուր ցելիքում: Դրա հետ միասին մշակովի կուլտուրա-ներն ես ի վիճակի յեն ապահովել աշնանացան ցորենի լավ բերքը և այնքան ավելի բարձր, վորքան վաղ եւ հավաք-վում մշակովին և զորքան լավ կռիվ եւ մղվում մոլախոտերի դեմ: Հասկավոր հացաբույսերն աշնանացան ցորենի համար երբեք նախորդ, հյուսիսում բոլորովին անպետք են, բայց վորքան դեպի հարավ, այնքան նրանք ավելի մեծ նշանակություն են ստանում և կանոնակար ազրուելիքիայի դեպ-բում մօտենաւմ են մշակովիներին:

Այս զոնայի հյուսիսային ռայոններում (Նովչերկաստլի, Մատվ-Կուրգանի, Մյասնիկյան և այլ) աշնանացան ցորենը սորմալ կերպով պետք ե գնա մաքուր ցելերի և վաղ սա- կովիների (արեածաղիկ բոստան, սիլոս) վրա:

Իսկ հարավային ռայոններում (Տիֆոնեցկի, Պավլովսկի, Կոնսկովսկի և այլն) աշնանացան ցողենի 60°<sub>ջ</sub> կարող ե-

զնալ սշակովիների վրա, իսկ մնացածը՝ հասկավոր հացաբույսերի, գլխավորապես, գարնանացան ցորենից և գարուց հետո:

Յեգիպտացորենը, գենագերչակը, ուշ հավաքելու պատճառով, աշնացան ցորենի համար չպետք ե նշանակվեն և նորմալ կերպով պետք ե դնան գարնանացան հացաբույսերի ցանքսի տակ: Սակայն 1933 թ. աշնան, ցանքսաշրջաններին անցնելու պատճառով, անխուսափելիորեն պետք կլինի վորոշ տարածության վրա ցորենը ցանել նաև զարնանացանի տեղը զոնայի հյուսիսային մասում և ուշ մշակովիների տեղը (յեգիպտացորենի): Այդ պատճառով աշնան ցանքսի պլանը կազմելիս, յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ պետք ե ճշգրիտ կերպով սահմանված լինեն, թե աշնանացան ցորենը վիճ տեղերը պետք ե ցանվի և նրանցից վորոշնց վրա առաջին հերթին պետք ե կատարել հավաքումը և մշակումը: Հնձած արտի այլելը և ծանծաղավարը պետք ե նկատել ամենից առաջ աշնանացանի համար նշանակված հողաբաժիններից, յեզիպտացորենն ամենից շուտ պետք ե հավաքել այն տեղերում, վորտեղ պետք ե ցանվի աշնանացան ցորենը և այլն:

Վորպեսպի ավելի շուտ գաշտերն ազատվեն աշնանացանի համար, պետք ե լայն չափով կիրառել մշակովիների մեքենայացրած հավաքումը—լորոգրեյկաներով, կոմբայններով պիկերներով, ամերիկական կեռմանների գործադրությամբ և այլն:

Հողի պատրաստությունը պետք ե ուղղված լինի մոլախոտերի դեմ կովելու և աշնանացան ցորենի ժամանակին ցանքսը կատարելու վրա: Պետք ե միշտ հիշել, վոր յերկրամասի կենտրոնական զոնայում հոկտեմբերի 1-ից հետո կատարված ցանքսն սպառնում ե բերքի մեջ պակասեցումով:

Յեյսկի փորձնական կայարանը 1927 թ. աշնանացան ցորեն ե հավաքել՝

Սիստեմբերի	1-ին ցանածից	12,4	ցենտն.	հեկտարից
»	15-ին	»	14,0	»
Հոկտեմբերի	1-ին	»	14,1	»
»	15-ին	»	8,7	»
Նոյեմբերի	1-ին	»	2,3	»

Յերկրամասի հարավային մասում աշնանացանի նորմալ ցանքսը գալիս ե ավելի ուշ ժամկետերին: Աշնանացան ցորենի ամենալավ բերքեր, կուբանի փորձնական կայարանի տվյալների համաձայն, ստացվում են հոկտեմբերի 1-ի և հոկտեմբերի 15-ի միջոցում կատարված ցանքսից: Այսպես միջին հաշվով մի շարք տարիներում ամենալավ բերք ստացվել ե:

Սեպտեմբերի	15-ին ցանածից	15,5	ցենտն.	հեկտարից
Հոկտեմբերի	1-ին	»	19,4	»
»	15-ին	»	20,0	»

Այսպիսի տվյալներ ել ստացվել են և եսսենտուկի փորձնական կայարանում: Սակայն, հաշվի առնելով դաշտերի սաստիկ կեղտոտվածությունը, ներկայումս՝ անհրաժեշտ աշենանցանը կատարել ավելի կանուխ: Աշնանացան ցորենն ավելի լավ ե կորիվ մղում մոլախոտերի դեմ միայն այն ժամանակ, յեթե նա աշունքից լով և զարգանում: Ուշ ցանքած աշնանացան յորենն աշունքից վատ ե թփոտվում, դարնանը դանդաղ ե զարգանում և նույնպես, ինչպես և գարնանացան հացահատիկները, իսկաւ կեղտոտվում ե մուլսոտերով:

Կուբանի փորձնական կայարանում կատարվել ե մոլախոտերի հաշվառքն աշնանացան ցորենի մեջ նրան հավաքելուց առաջ: Յեկ ցանքսի ժամկետերից կախված ստացվել են այսպիսի յեղակացություններ.

Աղյուսակ № 8

Աշնանացան ցորենի ցանքսի Ժամանակը	Մոլախոռների ցողովների քանակը ցողովների ընթի ցանքսի հետո գրամ- լ քառ. մետ- րի կրա	Մոլախոռների ցողովների քանակը ցողովների ընթի ցանքսի հետո գրամ- լ քառ. մետ- րի կրա
Հոկտեմբերի 15-ին . . . . .	37	42
Նոյեմբերի 1-ին . . . . .	65	92
» 15-ին . . . . .	88	107
Դեկտեմբերի 1-ին . . . . .	186	170

Վորքան ուշ և ցանվել ցորենը, այնքան նրա մեջ մոլախոտեր շատ են:

Միևնույնը հաստատվում է նաև եսսենառուկի փորձնական կայանների կողմից:

Աղյուսակ № 9

Աշնանացան ցորենի ցանքսի Ժամանակը	Մոլախոռների թիվը աշնանացանի 1 ք. մ. կրա	Մայիսի 30-ի հաշվառք	Հուլիսի 11-ի հաշվառք
Սեպտեմբերի 1-ին . . . . .	68	75	
» 15-ին . . . . .	97	111	
Հոկտեմբերի 1-ին . . . . .	131	167	
» 15-ին . . . . .	136	168	

Կլիմայական պայմանները և նախարդների հասունացման ժամանակը հարավային ռայոններում վոչ մի արգելք չեն դնում աշնանացան ցանքսը մշակովի հողամասում կանուխ կատարելու առաջ:

Ժամանակին ցանված արևածաղիկը հասունանում է ոգոստոսի յերկրորդ կետում, յեզիրատացորենը և գենագերչակը՝ սեպտեմբերի առաջին կետում: Հետեղապես, կուբանի

հարավային ռայոններում, հասկավորների հավաքելուց մինչև աշնանացանների ցանքսի աշխատանքի կանոնավոր կազմակերպման դեպքում, մոտև և 2 ամիս և մշակովիների հավաքելուց հետո մոտ մեկ ամիս: Ժամանակը միտնգամայն բարձական և աշնանացանների ցանքսի լավ պատրաստության համար:

Այս ռայոններում բոլոր մշակովիները (բացի բամբակենուց, մի քանի թելատուններից և շաքարի ճակնդեղի մի սասից) կարող են անցնել աշնանացանների ցանքսի տակ:

Ամբողջ հարցը կայանում է նրանում, վորպեսպի մշակովիները ժամանակին հավաքվեն: Զձգձգել հավաքումը, ավելի շուտ ազատել դաշտերը և հնարավորություն տալ աշնանացաններն ավելի լավ կանուխ ժամկետներին ցանել հարավային ռայոններում, համեմատաբար ավելի մեծ տարածությունների վրա, աշնանացան ցորենը կգնա և գարու և աշնանացան ցորենի հնձած արտի վրա: Այս տարածությունների վրա պարտադիր կերպով պետք է կատարվի հնձած արտի այրումը և ըստ հնարավորության կանուխ ծանծաղավարը հետագա խոր (15—18 սմ) վարումը վոչ ուշ, քան աշնանացանի ցանքսից 10 որ առաջ:

Այս ռայոններում առանձնապես անհրաժեշտ է հնձած արտի այրելը և ծանծաղավար կատարելը և աշնանացան ցորենի բերքահավաքից հետո թափածներից զարգացող բույսի վոչնչացումը, վորովհետեւ հնձած արտի և մասնավորակես թափած սերմերից զարգացած բույսերի վրա, զարգանում են աշնանացան ցորենի հիվանդությունները և վնասատուները, որինակ, ժանդա, բղեղ և այլն:

Ստավրոպոլի և Թերեքի հարավ-արեվելյան ռայոններում աշնանացան ցորենի նախորդները ցանքսաշըջանների մեջ պետք է լինեն ցելերը, վաղ մշակովիները, կորեկ և գորշ հացարույսեր: Ստավրոպոլի ռայոններում աշնանացան ցորենի մի մասը դնում է հենց ցորենի տեղը:

Ստավրոպոլի փորձնական կայանը յուր զոնայի ավելի խոնավ ռայոնների (արևեմտյան փորձագաշտերի փորձերը) համար այսպես և վորոշում աշնանացան ցորենի նախորդների կարծիքը: Յեթե աշնանացան ցորենի բերքը սև ցելի վրա ընդունենք  $100\%$ , այն ժամանակ ուրիշ նախորդներից հետո բերքը հավասար կլինի.

Վեկից հետո, վարսակի հետ . . . . .	$83\%$
Վիսեռից հետո . . . . .	$82\%$
Լորուց հետո . . . . .	$76\%$
Կարտոֆիլից հետո . . . . .	$77\%$
Կորեկից հետո . . . . .	$66\%$
Թարուց հետո . . . . .	$63\%$
Արևածաղկից հետո . . . . .	$59\%$
Յեղիպտացորենից հետո . . . . .	$53\%$
Ճակնդեղից հետո . . . . .	$36\%$

Իսկ այս զոնայի ավելի յերաշտային ռայոնների համար (արևելյան փորձագաշտի փորձերը) զանազան կուլտուրաների համեմատական արժեքն, իբրև աշնանացանի նախորդների, համեմատած սև ցելի հետ, չափվում է հետեւյալ թվերով.

Սև ցել . . . . .	$100\%$
Լորու . . . . .	$108\%$
Կորեկ . . . . .	$98\%$
Մողար . . . . .	$88\%$
Արևածաղկ . . . . .	$85\%$
Յեղիպտացորեն . . . . .	$85\%$
Վեկ վարսակի հետ . . . . .	$83\%$
Գարնանացան ամուր ցորեն . . . . .	$83\%$
Ճակնդեղ . . . . .	$65\%$

Պրիկումսկի փորձնական կայանն աշնանացան ցորենի լավագույն նախորդները համարում ե (արժեքի իջնող կարգով).

- 1) Սև ցել
- 2) Մողար
- 3) Դում
- 4) Սիսեռ
- 5) Կարտոֆիլի
- 6) Կորեկ
- 7) Վեկ վարսակի հետ
- 8) Արևածաղկի
- 9) Յեղիպտացորեն

Այս բոլոր աղյուսակներից բոլորովին ակներև յեղրակացությունն այն ե, վոր վորքան նախորդների բերքահավաքը շուրջ կատարվում, այնքան բարձր ե նրան հետեւող աշնանացան ցորենի բերքը:

Գարնանացան հասկավորներն ել յերբեմն, իբրև նախորդներ, չեն զիջում մշակովիներին, վորովհետեւլ մշակովիներից հոտո, նրանց ուշադասավաքի պատճառով, աշնանացանի ցանքսը կատարվում է մեծ ուշացումով:

Ցանքսի ժամկետն այնքան մեծ նշանակություն ունի, վոր ցանքսի ուշացնելու գեպքում սև ցելն ել մինչև անգամ կորցնում ե իր նշանակությունը: Այսպես, միջին հաշվով, յոթը տարվա ընթացքում Ստավրոպոլի փորձնական կայարանը աշնանացան ցորենի այսպիսի բերքեր և սաացել հեկտարից (ցենտտներով  $40\% \cdot 0\%$ ):

1. Սև ցելի վրա վաղ ցանքս $16,7$ ցենտն. — $100\%$
2.      »      »      » $10,5$ »      — $63\%$
3. Յեղիպտացորենի ուշ » $9,0$ »      — $54\%$
4. Կարտոֆիլի      »      » $10,8$ »      — $65\%$

Ստավրոպոլի և Պրիկումսկու փորձնական կայարանների աշխատանքները բոլորին պարզ կերպով սահմանել են, վոր հարավ-արեւելյան ռայոնների համար լավագույն ժամկետը սեպտեմբերի կեսն ե:

Ցանքսի ուշացումը, մինչև անգամ լավ նախորդներից հետո յեւ հասցնում ե բերքատվության մեծ պակասեցման: Այդ պատճառով այս տարվա աշնան ցանքսաշրջաններն անցնելու ժամանակը, բոլոր ուժերը պետք ե ուղղված թմբեն

գեղի մշակովի կուլտուրաների կանուխ բերքահավաքի, հնածած արտերի հնարավորության չափով կանուխ այրելու և ծանծաղավար կատարելու կողմը: Մանծաղավարից, հնածած արտերի և մշակովիներից ազատված դաշտերի խորերկը պետք ե կատարվի սեպտ. սկզբներից մոչ ուզ, վորպեսդի սեպտ. կեսին կարելի լինի մասսայական ցանք ծավալել: Ստավրոպոլի միքանի ռայոններում աշնանացան ցորեններին սաստիկ վնասում են շվեդական և հետևենական ճանճերը: Անհրաժեշտ ե ֆեաստուներով վարակված տարածությունները վորոշել և առաջին հերթին և մաքսիմալ խնամքով կովի համապատասխան ազրատեխնիկան միջոցներ ստեղծել:

## 5. ԱՇԽԱՏԱՆԳՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԵՐԸ ՅԵՎ ՎՈՐԱԿՆ ԱՌԱՋԻՆ ՊԼԱՆՈՒՄ

Մեր յերկրամասի կոլտնտեսությունների մեծ մասի ցանքաշրջանի դաշտերը և բրիգադային՝ հողաբաժիններն իսկականում արդեն հատկացված են, պահաջիկում են միայն միքանի ռայոնի ուղղություն, կուսակցության Յերկրկոմի և Յերկրգործկոմի վորոշման համապատասխան:

Իսկ մյուս կոլտնտեսություններում ցանքսաշրջանների մշակումը և նրան կորելն այնպես պետք ե կազմակերպվի, վորպեսդի 33 թ. աշնանացան և 34 թ. գարնանացան կուլտուրաները լիսապես զետեղված լինեն ցանքսաշրջանների դաշտերում: Այդ ժամանակ առաջին հերթին հարկավոր ե հողաբաժինների հատկացնել աշնանացան ցանքսերի համար, ցանքուի կամպանիայի իր ժամանակին ծավալումը չկասեցվի:

Այստեղ, վորտեղ գեռ ևս ցանքսաշրջաններ չեն մտցված, ռայոնական կազմակերպությունների, ՄՏԿ.ի և կոլտնտեսությունների առաջ հետեւյալ ինքիրներն են կանգնած:

Առաջին՝ Յենելով ռայոնին տրված ցանքսերի տարածություններից ընդհանուր կերպով, ճիշտ կերպով սահ-

մանել ցանքսաշրջանի առաջադրություններն առանձին կոլտնտեսությունների համար և ցանքսաշրջանների սքեմները նրանց համար: Այստեղ հարկավոր ե մաքսիմալ չափով՝ հաշվի առնել յուրաքանչյուր կոլտնտեսության կոնկրետ պայմանները — տնտեսության ուղղությունը, հողերը, աշխատող ձեռքերի քանակը, զինավորությունը մեքենաներով, բնական հողաբաժինների լինելը, կենդանաբուծության գարգացումը և այլն: Այս ինդիբը հենց նրանով ավելի պատասխանատու յե, վոր հետագայում ցանքսերի տարածության պլանի կազմելը պետք ե կատարվի մոտցված ցանքսաշրջանների հաշվառումով և ցանքսաշրջանների վոչ մը բեկում չի կարող թույլատրվել:

Յերկրուգը՝ — Կոլտնտեսության տերը կտրիայի վրա ցանքսաշրջանի դաշտերը և բրիգադային հողաբաժինները կանոնավոր զետեղելու Այստեղ հարկավոր ե ինկատի ունենալ կոլտնտեսության հողերի կոնֆիկուրացիան (հողերի արածության ձևը), հողամասերի զետեղումը, բնական սահմանները (գետեր, ձորեր և այլն), ճանապարհների ցանցը և այլն: Դաշտերը և բրիգադային հողաբաժինները պետք ե հավասարամեծ լինեն և, լավագույն մեքենայացման նույտառակով, հնարավորության չափ, մեծությամբ ավելի խոշոր, հարմար գյուղի և հիմնական ապրանքային մթերքի հանձնելու կետի հետ հաղորդակցություն պահպանելու համար (յերկաթուղու կայարանի, նավահանգստի հետ) և այլն:

Ցուրաքանչյուր կոլտնտեսային բրիգադ պետք ե առբողջ ցանքսաշրջանի ժամանակվա համար հողաբաժիններ ստանա ցանքսաշրջանի բոլոր դաշտերում, և այնպես, վորպեսդի բրիգադի այդ հողաբաժինները կազմեն մի ամբողջական մասսիվ:

Կոլտնտեսային բրիգադը պետք ե հող ունենա մեկ տեղում, վորպեսդի տեղափոխության համար ավելցրդ ժամանակ չկորցնի, լիակատար կերպով ոդտագործի իր արտադ-

բության միջոցները, շինի իր դաշտային կայանը, լավ կազմակերպի յուր արտադրական և կենցաղային տնտեսությունը:

Յերրորդ՝ — Ճիշտ կերպով զետեղել կուլտուրաները ցանքսաշրջանի դաշտերում և կաղմել ցանքսաշրջանին փոխանցման պլանը: Այստեղ առանձնապես պետք ե մանրակրկիտ կերպով հաշվի առնվեն յուրաքանչյուր դաշտում, յուրաքանչյուր վանդակում ինչպիսի կուլտուրաներ են ցանվել վերջին տարիները, ինչպիսի մոլախոտեր և ինչպիսի քանակությամբ են կեղտոտում դաշտերը, ինչպիսի վնասատուներ և հիվանդություններ յեղել են և այժմ ել նկատվում են: Լավագույն հողերը պետք ե հատկացնել ավելի արժեքավոր կուլտուրաների համար և առաջին հերթին աշնանացան ցորենի համար:

Ցանքսաշրջանին անցնելու ժամանակ առաջին տարին վոչ բոլոր կուլտուրաները և վոչ ամբողջ տարածության վրա պետք ե բռնեն այն նախորդների տեղը, վորոնց տեղը, վոր նրանք պետք ե բռնելին ցանքսաշրջանում:

Վորոշ մասում անխուսափելի յե վատ նախորդների տեղը կատարել ցանքսը: Այդ պատճառով խնամքով պետք ե մշակել ցանքսաշրջանին փոխանցման պլանը և ամեն մի հոգաբաժնի համար պետք ե սահմանվեն ազրոտեխնիկան միջոցառումներ, վորոնք վատ նախորդների անրարենպատ աղդեցությունը վերացնեն և ապահովեն փոխանցման շրջանումն ել բերքատվության բարձրացում:

Յեկ չօրրորդ խնդիր՝ — Պայքարել աշնան կամովանիայի բոլոր առաջադրությունների իր ժամանակին կատարման և դ. ա. աշխատանքների բարձր վորակի համար:

Լավագույն նախորդների հարցը քննելով, մենք ամեն անգամ գալիս ենք այն յեղակացության, վոր ինքն ըստ ինքյան նախորդը, նույնիսկ ամենալավը, չի ապահովում աշնանացանի բարձր բերքը:

Հացարույսերի բերքն ամենից առաջ կախված է հողի պատրաստման վրակից և ցանքսի ժամկետից: Հետևապես քիչ ե սահմանել կուլտուրաների կան նավոր հերթականություն և կանոնավոր կերպով կտրել ցանքսաշրջանը: Իսկականում հարկավոր ե այդ կուլտուրաների համար ապահովել բարձր ազրոտեխնիկա:

Աշնանացան հացարույսերի վերաբերմաբ, առանձնապես ներկա ցանքսաշրջանին փոխանցման մուենտին, դաշտերի մեծ չափով կեղտոտվածության դեպքում, վճռական միջոցառումներ հանդիսանում են՝ հնաձած արտերի այրելը և ծանծաղավարը, մշակովիների բերքահավաքը ժամանակին, խոր նախացանյա հերկը և իր ժամանակին կատարված կանուխ բարձրավորակ ցանքը:

## 6. ԱՅՈՒՆ Ե ՎՃՐՈՒՄ ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ ՀԱԶԱՐԴԻԹՅՈՒՆԸ

Կուսակցության Ցերկրկոմը և Ցերկրգործկոմը 2/VIII 1933 թվի վորոշումով սահմանեցին, «վոր 1933 թվի աշնանացան ցանքսերը և 1934 թվի գարնանացան կուլտուրաները պետք ե լիովին դետելված լինեն ցանքսաշրջանների դաշտերում»:

Այդ պատճառով ցանքսաշրջաններ վացնելու համար վճռական նշանակություն ե ստանում 1933 թվի աշունը:

Ցանքսաշրջանները մտցնելու համար կորցնել աշունը, նշանակում ե կորցնել ամբողջ տարին: Ցեթե աշնանացանները ցանքսաշրջանի դաշտերում ցանված չլինեն, ուրիշն հասկանալի յե, վոր գարնանացաններն ել չեն կարող կանոնավոր գետելված լինել:

Աշնանացանի ցանքսը ժամանակին կատարվելուց, նրա գետեղման կանոնավորությունից և աշնանավարի պլանը կատարելուց կախված ե — 1933 — 34 թվին ցանքսաշրջան-

Ներն իսկապես պիտի մտցվեն արդյոք և 1933 — 34 թվին իսկապես կլինիկն բերքի բարձրացման միջոց, թե վոչ:

1933 թվի աշնանացանն սկսվում և բերքահավաքի աշխատանքների դեռ ևս չավարտված պայմաններում: Այդ աշխատանքներից — հասկավոր և մշակովի կուտառւրանների բերքահավաքից, շուտափույթ կալսերուց, կոլտնտեսությունների, ժամկետին իրանց պարտականությունները պետությանը հացահատիկը հանձնելու վերաբերմամբ կատարելուց կախված և ամենասերտ կերպով, ամենաանմիջական կերպով աշնանացանի ծավալումը:

Այդ պատճառով ցանքսաշրջանների մշակման և մոցներու ժամանակ ույսնական կազմակերպությունների, ՄՏԿ կողմանականությունների խնդիրն և հանդիսանում — մորիլիդացիայի յենթարկել կոլտնտեսական մասսային բերքահավաքը և հասկավորների կալսումը շուտափույթ վերջացնելու համար, լիովին և ժամանակին պետությանը հատիկահանձնումն կատարելու համար և մշակովիները շուտ հավաքելու համար:

Միայն այս պայմաններում կարող են անհրաժեշտ չափով աղատվել դաշտերը, թիթեանալ աշխատող ձեռները և լծկանն աշնանացանը և աշնանավարը անցկացնելու համար:

## 7. ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆՆԵՐԸ ՊԵՏԾ Ե ՄՏՑՆԵՆ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Կոլտնտեսությունների մեջ ցանքսաշրջաններ մտցնելը, իբրև կուսակցության և խորհրդային իշխանության հիմնական միջոցառումներից մեկը, դարձնելու կոլտնտեսությունները բոլշեկական և կոլտնտեսականներին ունեոր, հանդիպի դասակարգային թշնամու կառաղի դիմադրության:

Պրոլետարական պետության և կոլտնտեսային շինարարության դասակարգային թշնամի տարրերը կփորձեն

ցանքսաշրջանները խեղաթյուրել, նրանց մեջ մտցնել իրանց կուլակային «ազբուտելմիկան», բեկանել կորիվը բերքի համար:

Ցանքսաշրջանների մշակման և անցկացման մեջ պետք ե լինի մշտական չժուլացող դասակարգային հսկողություն:

Ցանքսաշրջանն իսկապես կարող և բերքի բարձրացման իրական միջոց դառնալ միայն այն ժամանակ, յերբ նրանշանակությունը հասկանում և յուրացնում ե կոլտնտեսային մասսան, յերբ ցանքսաշրջանի իրականացման և բարձրագրութելունիկայի համար պայքարի ամբողջ կոլտնտեսացին մասսան: Այդ պատճառով ույսնական կազմակերպությունների, ՄՏԿ-ի և կոլտնտեսությունների խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի մորիլիդացիայի յենթարկեն կոլտնտեսականների ակտիվությունը և փորձը ցանքսաշրջանի լավագույն կազմակերպման, ցանքսաշրջանների դաշտերը և ըրիզադային հողաբաժինները կտրելու, կուլտուրանները կանոնավոր կերպով զետեղելու և բոլոր աշխատանքները ժամանակին կատարելու համար:

ՄՏԿ-ի քաղբաժինների ղեկավարությամբ կոլտնտեսություններում պետք ե ծավալի լայն մասսայական աշխատանք, վորը դարձնի ցանքսաշրջանը՝ կոլտնտեսային մասների նվաճումը:

Միայն այս պայմաններում ցանքսաշրջանը հաջողությամբ կմտցվի կոլտնտեսային դաշտերում և կդառնա բերքի բարձրացման և կոլտնտեսությունների հետագա կազմակերպչական տնտեսական ամրացման ուժեղագույն լծակը:

## ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի յեվ  
ՀԿ(թ)Կ Կենտրոնական Կռախտելի Վլորումը

Կոլեկտիվացման հաջողությունների շնորհիվ կոլտնտեսական գյուղացիությունը գյուղատնտեսական հիմնական ու այններում միացրել ե հողի  $80 - 90\%$ ՝ վորն առաջ գտնվում եր անհատական ողբագործման մեջ։ Անհատական տնտեսությունների մասը շերտերն իրանց հեռավոր հողերով, մեջ ընդհատությամբ, մշտական հողաբաժանությամբ միացած են այժմ։ Կոլտնտեսական գյուղատնտեսության կողմից խոշոր մասսիվների մեջ։ Կազմակերպված ե խորհումնական ստացել ե 100 հազարից ավելի տրակտորներ։

Այս բոլորի հետևանքով ԽՍՀՄ-ում ցանքսերի տարածությունները, համեմատած նախապատերազմյան շրջանի հետ, աճել ե 30 միլ. հեկարով, առանձնապես տեխնիկական և մշակովի բույսերով և խոտաբույսերով։

Բայց սրանից հետևում ե այն, վոր ցանքսերի տարածությունները բավականաչափ ընդարձակվել են և գյուղական տնտեսության բարձրացման տուածին շրջանի նպատակը — տարածության մեծաքանակ ընդարձակումն — արդեն իրադորժված ե։ Տեխնիկական և մշակովի բույսերի ցանքսերի հետագա ընդարձակումը, վորը հանդիսանում է ավելի աշխատածավալ կհասցներ աշխատող ուժի և լծկանի չափից գուրս բեռնավորվածության, մշակության վորակի

վատացման և բերքի իջեցման։ Այդ նշանակում ե, վոր հասել ե ժամանակը, յերբ անհրաժեշտ ե տնտեսության աճը լայնությամբ, ցանքսերի տարածության ընդարձակմամբ դարձնել զեպի հողի լավագույն մշակման, բերքի բարձրացման պայքարը, զարգացման տվյալ շրջանում գյուղատնտեսության ասպարեզում իբրև զլխավոր և կենտրոնական խնդիրը։ Խոշոր սոցիալիստական տնտեսության առավելությունները լիակատար հնարավորություն են տալիս խորհումնական ստացման և կոլտնտեսություններում բերքը բարձրացնել այնպիսի չափերով, վորը մատչելի յե անհատական տնտեսություններին։

Երա հետ կապված, ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀԿ(թ)Կ Կենտրոնական Կոմիտեն վորոշում են։

1. Դադարեցնել տեխնիկական և մշակովի կուլտուրա ների տարածության ընդարձակումը 1933 թվի պլանով և նպատակահարմար համարել միայն հացահատիկայինների (զլխավորապես ցորենի, վարսակի, գարու) տարածությունների ընդարձակումը։

2. 1933 թվի գարնան գարնանացանի պլանը սահմանել  $97\frac{1}{2}$  միլիոն հեկտար (այս տարվանից մեկ միլիոն հեկտարով ավելի) այն նկատառումով, վորպեսզի ցորենի, վարսակի և գարու տարածություններն աճեն  $2\frac{1}{2}$  միլիոն հեկտարով, վորոնցից մեկ միլիոն հեկտար 1933 թվի տարածությունների ընդհանուր աճման հաշվին, իսկ միլիոն ու կես հեկտարը մյուս ավելի պակաս կարենը կուլտուրաների կրծատման հաշվին։

3. Բոլոր կուսակցական, խորհրդային, կոմյերիտ և տընտեսական կազմակերպությունների աշխատանքը, վորոնք գյուղական տնտեսության ասպարեզում են աշխատում, — դարձնել իբրև տվյալ մոմենտին գյուղատնտեսության դարձացման կենտրոնական խնդրի, անբացառապես բոլոր կուլտուրաների բերքի բարձրացման համար։

4. Հանձնարարել ԽՍՀՄ-ի Հողմուկոմին 1933 թվի ընթացքում մտցնել բոլոր խորհանական սուլթյունների և կոլտնտիւսությունների մեջ ցանքսաշրջան բերքի բարձրացման իրեն լավագույն միջոցներից մեկը, այն նկատառումով սակայն, վորպեսզի ցանքսաշրջանի մտցնելը կապված լինի վորոշ մարդկերի և յերկրամասերում հասկավոր հացահատիկային կուլտուրաների տարածությունների համապատասխան ընդարձակման հետ:

5. Հացանել 1933 — 34 թվին հաստիկային կուլտուրաների տեսակային փոնդը մինչև 100 միլիոն փութի, վորի թվում հաշվել 40 միլիոն փութ պետական և 60 միլիոն փութ ՄՏԿ ներքին մեջկուտանեսական փոխարինման ֆոնդը, հանձնարարելով ԽՍՀՄ Հողմուկոմին սահմանել սերմային ռայոնացում և միջոցառումներ մշակել մաքուր տեսակային սերմերով ցաներուն՝ ըստ կուլտուրաների և ռայոնների:

6. Հանձնարարել Հողմուկոմին և Ծանր Արդյողկոմին յերեք շաբաթվա ընթացքում ԽՍՀՄ-ի ժողովածորհ մտցնել բերքի բարձրացման համար անհրաժեշտ քիմիական պարատանյութերի, առանձնապես ազոտային արտադրության ուժեղացման առաջարկություն:

7. Հանձնարարել ԽՍՀՄ-ի Հողմուկոմին և Տրակտորոցենտրին վերակառուցել մեքենա-տրակտորային կայանների աշխատանքն այսպես, վորպեսզի բերքի բարձրացման խնդրին յենթարկված լինի ՄՏԿ-ի ընթացիկ ազրո-արտադրական աշխատանքը, ի նկատի ունենալով վորշմեքենաարակտորային կայանները պետք է կուլտուրանությունների զեկավարները լինեն վոչ միայն արակտորային տեխնիկայի գործառնության, այլև ապրոնությայի ասպարեզում ևս:

ԽՍՀՄիության ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ Վ. Մոլոտով (Սկրյաբին)

ՀԿ(Բ)Կ-ի կենտրոնական կոմիտեյի քարտուղար՝ Ի. Օսալին  
1932 թ. 29 սեպտեմբերի.

## ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1933 թ. ոգոստոսի 2-ին ՀԿ(Բ)Կ-ի Հյուս. Կովկասի Յերկրկոմի յեվ Յերկրգործկոուի վորումը

Կոլտնտեսություններում կանոն սկոր ցանքսաշրջաններ մտցնելը հանդիսանում ե բերքի բարձրացման և կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման կարերագույն միջոցը:

Յերկրկոմը և Յերկրգործկոմը հաստատում են, վոր յերկրամասի 51 ռայոններում մինչև ներկա ժամանակը մեծ աշխատանք և կատարված ցանքսաշրջանների նկատմամբ և այս ռայոններից շատերը գարնաւացանն անց են կացրել ցանքսաշրջանների դաշտերին հետեւելով:

Սակայն մյուս ռայոններում ցանքսաշրջան չի սացրված, կամ թե նրա անցկացման ժամանակ թույլ են տրված կուպիտ սխալներ և կուսակցության ու կառավարության դիրեկտիվների խեղաթյուրությունը, վորոնք արտահայտվում են՝

ա) յերկրամասի համար վճռական նշանակություն ունեցող հասկավոր կուլտուրաների պակասեցման հակապետական տեխնիկանցների մեջ,

բ) կազմված կոլտնտեսային բրիգադի ձեղքվածի մեջ,

գ) նրա, վորպես կոլտնտեսության հիմնական ողակի, արհամարելու մեջ:

դ) կերախոտերով բոնված տարածությունների լայնացնելու մեջ՝ ի հաշիվ հասկային կուլտուրաների պակասեցման:

ե) անսանաբուծության համար հաստատում կերի բառ  
պա ստեղծելու խնդրի մոռացության մեջ՝  
դ) ցանքսաշրջանի գրասենյակային ճանապարհով մշակ-  
ման բյուրոկրատական բնույթի մեջ՝ առանց կոլտնտեսական  
ակտիվի ներգրավման, առանց կոլտնտեսական մասսաների՝  
մասնակցության:

### Յերկրկոմը յեվ Յերկրգործկոմը վորուսում են.

1. Հաստատել 51 ուայոններում անցկացված աշխատանքը՝  
ցանքսաշրջաններ մտցնելու և իսկականում դաշտերի բաժան-  
նելու վերաբերմամբ:

Պարտադրել ուայգործկոմներին մի ամսվա ընթացքում  
առանձին գեղաքերում իսկականում բաժանված ցանքսաշր-  
ջանների մեջ անհրաժեշտ մանր ուղղություններ կատարել, ա-  
մենեին թույլ չտալով նրանց քայլայումը և սահմաննել  
կոլտուրանների կանոնավոր հերթականություն, վորը նպաս-  
տում ե բերքի բարձրացմանը:

2. Մնացած ուայոնների համար ընդունել Յերկրհողբաժ-  
նի կողմից մշակված ցանքսաշրջանների օրենքները, նույն-  
պես և ցանքսային տարածությունների վերաբերմամբ յե-  
ղած առաջնորդող առաջադրությունները, վորոնցով պետք  
է ղեկավարվեն ուայոնները ցանքսաշրջաններ մտցնելու ժա-  
մանակ:

3. Պարտադրել ուայկոմներին և ուայգործկոմներին, վորտեղ  
դեռ ես ցանքսաշրջանների բաժանում չի կատարվել, ամիս  
ու կեսվան ընթացքում անցկացնել իրանց ուայոններում  
ցանքսաշրջանների մշակումը կոլտնտեսությունների մեջ և  
նրանց բաժանումը իսկականում:

4. Սահմանել, վոր 1933 թվի աշնանացանները և 1934  
թվի գարն անացանները պետք ե լիովին զհտեղված լինեն  
ցանքսաշրջանների դաշտերում:

5. Հաստատել 1933—1937 թ. թ. համար յերկրամասում  
ցանքսերի տարածության հսկիչ թվերը՝ կապված ցանքսաշր-  
ջաններ մտցնելու հետ:

6. Ցանքսաշրջաններ մտցնելու աշխատանքների անհա-  
պաղ ծավալման նպատակով, առաջարկել Յերկրհողբաժնին  
և ուայկոմներին հինգ որվա ընթացքում ՄՏԿ-ներին և կոլ-

տնտեսություններին ուղարկել 1923 թվի աշնանացա-  
նի, 1934 և 1937 թվերի գարնանացանի առաջադրու-  
թյուններն՝ ընդունված ցանքսաշրջանների սքեմների հետ  
միասին:

Պարտադրել ՄՏԿ-ների դիրեկտորներին, ուայկոմների ա-  
ռանձին հոկողության տակ, ողոստոսի 15-ից վոչ ուշ, ցանք-  
սերի և ցանքսաշրջանների վերաբերյալ առաջադրություն-  
ները հասցնել կոլտնտեսությունների վարչություններին և  
բրիգադներին և ընդության առնել նրանց, հաշվի առնելով  
արագադրության և աշխատանքի միջոցները ՄՏԿ-ում, կոլ-  
տնտեսություններում, բրիգադներում, նմանապես և կենդա-  
նաբուծության և հատուկ ճյուղերի կարիքները։ Կանկրես  
կոլտնտեսային ցանքսաշրջանների ոգոստոսի 17 ին թե ՄՏԿ-ի  
յեվ թե քաղաքածինների կողմից նայված յեվ ընթանապահ պետք  
ե լինեն յեվ ոգոստոսի 20 ին ուայկոմների բյուրունների կողմից,  
իսկ ոգոստոսի 25-ին ուայկոմների կողմից ընթանապահ ցանք-  
սաշրջանները պետք ե իսկականում մօցված լինեն։

7. Առաջարկել ուայկոմներին, ուայգործկոմներին, ուայող-  
բաժիններին և ՄՏԿ-ներին ցանքսաշրջաններ մտցնելու ամ-  
բողջ աշխատանքն այնպես տանել, վոր ապահովել պետա-  
կան առաջադրությունների — բոլոր կուլտուրանների, ա-  
ռաջին հերթին ցորենի լրիվ և կանոնավոր զետեղումը և  
նրանց բերքի բարձրացումը։

8. Յերկրհողբաժինը, ուայկոմը, ՄՏԿ-այանները և կողտն-  
տեսությունների վարչությունները հատուկ ուշագրություն  
պետք ե ղարձնեն աշնանացանքների համար ցանքսաշրջան-  
ների անհապաղ (ոգոստոսի 25-ից վոչ ուշ) կերպով հողա-  
բաժիններ հատկացնելու վրա։

9. Պարտագորեցնել ՄՏԿ-ների քաղբաժինների պետերին  
և ուայկոմների քարտուղարներին կոլտնտեսություններում  
լայն ասսայական աշխատանք ծավալել ցանքսաշրջաններ  
մտցնելու շուրջը, մորիկիզացիայի յենթարկելով կոլտնտե-  
սականների փորձը և ակտիվությունը, ցանքսաշրջանների  
դաշտերի մեջ կուլտուրանների կանոնավոր ղետեղման, ցանք-  
սաշրջանների դաշտերի բրիգադների հողաբաժինների լա-  
վագույն բաժանման, ցանքսաշրջանին անցնելու պահնի  
մշակման և կոլտնտեսությունների ամրացման և բերքի  
բարձրացման նպաստող միջոցառումների շուրջը։

10. Կոլտնտեսություններում մշակված և կոլտնտեսությունների վարչությունների կողմից ընդունված կոնկրետ ցանքսաշրջանները պետք են պարտադիր կերպով, վոչ ուշ, քան 1933 թվի հոկտեմբերի 1-ը, ուայգործկոմի պրիզիդիումի կողմից ամեն մի կոլտնտեսության համար հաստատված լինեն:

Ուայգործկոմի հաստատելուց հետո, արգելել առանց Յերկրուղաժների թույլտվության, վորեն մեկին մտցված ցանքսաշրջանների վորեն քակո մն կատարել:

11. Պարտավորել Յերկրուղաժնին և ուայկազմակերպություններին ցանքսաշրջաններ մտցնելու ժամանակ հաստուկ կերպով մշակել տեսակային սերմնաբուծության զարգացման և բազմամյա և միամյա կերախոտերի սերմնաբուծության հարցը, ապահովելով յերկու տարվա ընթացքում հիմնական հատիկային և տեխնիկական կուլտուրաների լիովին տեսակափոխության անցնելու անհրաժեշտ պայմանները կոլտնտեսություններում:

12. Սեպտեմբեր ամսվա ընթացքում լսել Յերկրուղաժնումի նախագահության նիստին մի շարք ուայգործկոմների ղեկուցումները՝ կոլտնտեսություններում ցանքսաշրջաններ մտցնելու մասին:

13. Յերկրուղաժնում և Յերկրուղաժնում նախադպուշացնում են յերկրամասի և ուայունների բոլոր կուսակցական-խորհրդային և տնտեսական կազմակերպություններին, նույնպես և ՄՏԿ դիրեկտորներին և քաղըաժնենների պետերին՝ ցանքսաշրջանները թերագնահատելուց և նրանց անցկացմանը ձևականութեաբերեն վերաբերվելուց: Դեռ ևս չշախջախված դասակարգային թ նամին այստեղ ևս փորձում են անցկացնել իր ֆիսարար աշխատանքը և խեղություրել ցանքսաշրջանների մտցնելը: Այդ պատճառով ել ցանքսաշրջանների մշակման և իրականացման բոլոր շրջաններում պետք են ապահովված լինի ամուր կուսակցական զիծը և բոլշեկական բարձր զգոնությունը:

ՀԿ(թ)Կ-ի Հյուս. Կովկ. Յերկրուղաժնության պատուղար՝  
Բ. Շերոլդայն

Յերկրուղաժնումի նախագահ՝ Վ. Լարին

## ՀՐԱՎԱՐ ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

### ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1. Կոլտնտեսություններում կանոնավոր ցանքսաշրջաններ մտցնելը կարեռագույն միջոց են հանդիսանում սոցիալաստական դաշտերի բերքի բարձրացման և կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման համար:

Կանոնավոր ցանքսաշրջաններ մտցնելու աշխատանքի մեջ յուրաքանչյուր ուայոնում, ՄՏԿ-ում և կոլտնտեսության մեջ պետք են յերեան դա դասակարգային բոլղեիկական զգունություն: Ցանքսաշրջաններ մտցնելու ժամանակ դասակարգային զգունության կորուստը կամ թուլացցումը կարող են ոգտագործել դասակարգային թշնամու կողմից ի ֆիսապրոլետարական պետության և իրանց՝ կոլտնտեսակականների շահերի:

2. Առանձին կոլտնտեսություններում ցանքսաշրջանների մշակման և կազմակերպման հիմքում պետք են դրված լինեն.

ա) Ուայոնի կողմից տրված ցանքսի տարածությունների պլանային առաջադրությունը կոլտնտեսության, յելնելով ուայոնի կամ ամբողջ մարդի պետական առաջադրություններից (կոնտրոլ թվերից), ոյուղատնտեսական կուլտուրա-

ների ապրանքայնության բարձրացումը կոլտնտեսության կողմից իր գյուղական տնտեսության մթերքները պետությանը հանձնելու պարտականությունների լիակատար և առաջին հերթին կատարելը:

բ) Կուլտուրաների կանոնավոր հաղորդականությունը, վորը վորոշ ազրոտեխնիկական կանոններ կատարելու ժամանակ նպաստում ե բոլոր գյուղատնտեսական կուլտուրաների բերքի բարձրացման, առաջին հերթին տվյալ ռայոնի և կոլտնտեսության համար առաջնորդող ապրանքային կուլտուրաների,

գ) Կոլտնտեսության արտադրական պայմանների ավելի լիակատար ոգտագործումը (աշխատանք, լծկան, հող, վուտգում և այլն), բեռնագործության կանոնավոր բաշխումը աշխատողների և լծկան ուժերի վրա՝ ըստ գյուղատնտեսական տարվա շրջանների, վորն ուղղված ե դեպի աշխատանքի արտադրողականության և կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման բարձրացումը:

դ) Կոլտնտեսության կենդանաբանծության կերպով ապահովումը՝ բնական կերպին հողամասերի, կոշտ կերերի և գյուղատնտեսական արտադրության մնացորդների լիովին և շահավետ ոգտագործման միջոցով:

ե) Դաշտաբուծության մեքենայացման համար լավագույն պայմանների ստեղծումը:

3. Յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ վարչության ՄՏԿ-ի գյուղատնտեսի ղեկավարությամբ ցանքսաշրջանին անցնելու ժամանակ պետք ե մշակված լինի, հաշվի առնելով յեղած նախորդ կուլտուրաները և դաշտերի վիճակը, ագրոտեխնիկան միջոցառումների կոմպլիկս, վորն ապահովի բոլոր կուլտուրաների բերքի բարձրացմանը և խափանի անբարենպաստ նախորդների ազգեցությունը, վորոնք պատահում են ցանքսաշրջանն անցկացնելու առաջին տարիները:

4. Իբրև կանոն, յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ պետք ե սահմանվի մի ցանքսաշրջան:

5. Յերկու կամ մի քանի կոլտնտեսությունների համար մի ընդհանուր ցանքսաշրջան մացնելը խստիվ արգելվում է:

6. Կոլտնտեսության մեջ յերկու կամ մի քանի ցանքսաշրջաններ սահմանելը, վորոնք իրանց տնտեսական նշանակությամբ տարբեր են, թույլատրվում ե հետևյալ դեպքերում.

ա) Կոլտնտեսության մաջ առանձին ֆերմային մոտիկ կերպին ցանքսաշրջան կազմակերպելու դեպքում, վորը պահանջվում է կոլտնտեսային նախորդներին կանգնած և արոտի վրա յեղած ժամանակներին կերերով ապահովելու իրական անհրաժեշտությամբ:

բ) Կոլտնտեսության մեջ, վորտեղ մշակվում են աշխատածավալ տեխնիկական կուլտուրաներ, հատուկ գյուղամեջ ցանքսաշրջան կազմակերպելու անհրաժեշտության դեպքում կենտրոնացնելով նրա մեջ այդ աշխատածավալ տեխնիկական կուլտուրաները (բամբակենի, ճակնդեղ, ծխախոտ):

գ) Կոլտնտեսության տերրիտորիայի վրա մեծ տարածությամբ իրարից խիստ տարբերվող հողեր լինելու (որինակ՝ սևահող և ավաղ) դեպքում, վորը պահանջում է կուլտուրաների զանազան կազմ կամ նրանց տարբեր հաջորդականությունը:

դ) Կենդանաբուծության պրոբլեմի լուծումը պահանջում է ապահովել հաստատուն կերպին բազայով՝ ինչպես ապրանքային ֆերմաների կենդանաբուծությունը, նույնպես և կոլտնտեսականների կենդանաբուծությունը: Ուտի ցանքսաշրջան մտցնելու ժամանակ անհրաժեշտ ե ընտրել և կուտնահետեւ կուտադրությունների մշտական ոգտագործման համար ամրացնել բնական արտատեղային տարածությունները և խոտակների հողաբաժինները:

Բնական արտատեղիների բացակայության կամ բավականաչափ չլինելու և սակավակի կերերի մշակության ան-

հրաժեղության դեպքում, իբրև լրացում հիմնական դաշտային ցանքսաշրջանին, կոլտնտեսությունների մեջ կարող են մտցվել ֆերմաներին մոտիկներային ցանքսաշրջաններ, կերային կուլտուրաների ցանքսով, սրա համար ուայոնին և կոլտնտեսության համար նշանակված սահմաններում, ամենաին թույլ չտալով մնացած կուլտուրաների, առանձնապես հատիկայինների ցանքսի պետական առաջարությունների պակասեցումը:

Ֆերմաներին մոտիկ ցանքսաշրջանների մեջ կերային կուլտուրաները պետք ե համադրվեն համարկային հասկավորների հետ, ճարակաբույսերի ոգտագործման նպատակով, իբրև հասկավոր կուլտուրաների համար լավագույն նախորդներ և խոշոր գյուղատնտեսական մեքենաների և գործիքների ռացիոնալ ոգտագործման համար դաշտերի անհրաժեշտ տարածությամբ ապահովելու նպատակով:

Այն դեպքում, յերբ կոլտնտեսային հիմնական ցանքսաշրջանի դաշտերը դուրս են գալիս դեպի գյուղ, նույնպես փոքր կոլտնտեսություններում, կերային կուլտուրաների ցանքսը խորհուրդ ե տրվում կատարել ընդհանուր ցանքսաշրջանի գյուղին կամ ֆերմային մոտիկ ծայրերում, առանց ֆերմային մոտիկի ցանքսաշրջանի կազմակերպության:

8. Այն կոլտնտեսություններում, վորոնք մշակում են աշխատաձավալ տեխնիկական կուլտուրաներ և հողերի մեծ մասինքեր ունեն, վորոնք գյուղից հեռու յեն կամ ձգված են մեծ տարածության վրա (8—15 կիլոմետր), դաշտային, գլխավորապես հատիկային ցանքսաշրջանների հետ միասին կարող են մտցվել մասնագիտացած գյուղամերձ ցանքսաշրջաններ, վորտեղ կենտրոնացնում են այս կուլտուրաները (բամբակինի, շաք. ճակնդեղ, ծխախոտ), կոլտնտեսության աշխատավոր և լծկան ուժերն ավելի ռացիոնալ կերպով ոգտագործելու համար: Սակայն վրա հետ չի կարելի թույլա-

տրել գյուղամերձ ցանքսաշրջանի տեխնիկական կուլտուրաներով այնպիսի հագեցում, վորոնք գրկեր դաշտային ցանքսաշրջաններին հասկային կուլտուրաների համար լավ նախորդներից:

## ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԴԱշտերի ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄԵԶ ԿՈՒԼՏՈՒՐԱՆՆԵՐԻ ԶԵՏԵՂՈՒՄԸ

9. Ցանքսաշրջաններ մտցնելու ժամանակ, կոլտնտեսություններում անհրաժեշտ է, համաձայն ԽՍՀՄ-ի կդկ-ի և Ժկլ-ի 32 թվի 3/IX վորոշման, յուրաքանչյուր կոլտնտեսության վրա ամրացնել նրա ոգտագործման մեջ զտնված հողերը, այսինքն՝

ա) հայտնի դարձնել, վոր հողերն ինչպիսի սահմաններում մտնում են կոլտնտեսության հողաշահեցման մեջ:

բ) վերջացնել սահմանային վեճերի վճիռը հողային կոմիսիաներում:

գ) ամրացնել իսկականում կոլտնտեսությունների հողաշահեցման սահմանված սահմանները սահմանային նշաններով (սյուներ և սահմանաքարեր) և կոլտնտեսություններին տալ դոկումենտներ նրանց հողաշահեցման համար:

10. Մինչև ցանքսաշրջանի դաշտերի գետեղման նախադիմ կազմելը, կոլտնտեսության մեջ մյուս հողամասերից պետք ե անջատել արտը, ինչպես նաև նոր վարելու յենթակա հողերը, և սահմանագծվեն արտի մեջ տեղում գտնված ցանքսաշրջանի մեջ մտցնելու վոչ յենթակա հողամասերը (վարելու անպետք հողերը, փոքր հողամասերը, վորոնք պարերաբար վարարվում են ջրով և այլն), նույնպես և այն հողամասերը, վորոնք նշանակված են յատուկ նպատակների համար (ֆերմաներ, անասնաբակեր, գերեզմաններ, անասունների գերեզմաններ, նոր ճանապարհներ, բնակարաններ և այլն):

12. Կոլտնտեսության վոչ իրարից խիստ տարբերվող հողերի տեսակներ յեղած դեպքում, վորոնք թույլատրում են միատեսակ ագրոտեխնիկայի կիրառումը, ուստի և չեն պահանջում տարբեր ցանքսաշրջանների կազմակերպումը, անհրաժեշտ ե աշխատել յուրաքանչյուր ցանքսաշրջանի դաշտը յերկու տեսակների վրա և այնպես տեղափորել վորովեսղի դրանով ապահովի առանձին կուլտուրաների բերքի տարեկան հավասարաշափությունը:

13. Ցանքսաշրջանի դաշտերի զետեղման ժամանակ պետք ե դաշտաբուծության մեքենայացման համար ստեղծված լինեն ամենալավ պայմանները: Այդ նպատակով յուրաքանչյուր ցանքսաշրջանային դաշտերը հարկավոր ե ըստ հնարավորության մի համատարած մասսիվով տեղափորել մեքենայական մշակության հարմար կոնֆիգուրացիայով:

Բնական սահմանները (գետերը, ձորերը, հեղեղատները, յերկաթուղիները և այլն) պետք ե իբրև կանոն, ոգտագործվեն ցանքսաշրջանային դաշտի համար իրրե սահման:

14. Ցանքսաշրջանի դաշտերի զետեղման ժամանակ հարկավոր ե առանձին ուշադրություն դարձնել նրանց գյուղի հետ, հիմնական մթերքի հանձնելու կետի և իրար հետ ճանապարհներով կապված լինելու վրա, ձգտելով վոր տեղափոխման քիչ ծախսեր լինեն և առաջին հերթին ոգտագործելով յեղած ճանապարհների ցանցը առանց նոր ճանապարհներ անցկացնելու:

15. Ֆերմաններին մոտիկ ցանքսաշրջաններն անհրաժեշտ ե տեղափորել կենդանաբուծական ապրանքային ֆերմաններին և անասնաբակերին անմիջապես կից, այնպես, վոր ցանքսաշրջանների դաշտերն անմիջապես դուրս գան դեպի ֆերման կամ գոնե առնվազն հարմար հաղորդակցություն ունենան նրա հետ:

16. Այն տեղերում, վորտեղ նախագծվում ե մոտակատարիներում անտառային դաշտապաշտպան շերտեր հիմնադ-

րեր, անհրաժեշտ ե ցանքսաշրջանների դաշտերի տեղափորումը համաձայնեցնել այս շերտերի գետեղման նախագծի հետ:

17. Բերքի հավասարաչափության (մթերքի ընդհանուր հավաքի) ապահովման նպատակով, նմանապես և աշխատանքի, լծկանի և մեքենաների տարեկան հավասարաչափողագործման համար, ցանքսաշրջանի դաշտերն իրանց տարածությամբ պետք ե հավասարամեծ լինեն: Առանձին դաշտերի տարածության չափի շեղում ցանքսաշրջանի դաշտի միջին չափից թույլատրվում ե վոչ ավելի, քան 5—7 և բացառիկ դեպքերում մաքսիմում մինչև 10%:

18. Կոլտնտեսության մեջ ցանքսաշրջանի դաշտերի գետեղման և նրանց ցանքսաշրջանային համարակալումը սահմանելու ժամանակ պետք է լիովին հաշվի առնվեն նախորդները և դաշտերի վիճակը (կեղտոտվածություն, առանց վարելու թողած հողեր, կակուղ հողեր և այլն):

1933 թ: ավելի բարեհաջող նախորդներով և մաքուր հողերով դաշտերը պետք ե նշանակվեն առաջին հերթին հիմնական ապրանքային կուլտուրաների և հատկապես աշխանացան ցորենի համար: Ավելի կեղտոտված դաշտերը դարձնել մաքուր ցեղերի և մշակովի բույսերի համար:

19. Ցանքսաշրջանի յուրաքանչյուր դաշտում, իբրև կանոն, պետք ե զետեղվի մի հիմնական կուլտուրա:

Մի դաշտում յերկու կամ մի քանի կուլտուրաներ դեռեզեղելու ժամանակ, մեծ տարածություն բռնող կամ աշխատանքի և լծկանի մեծ ծախս պահանջող հիմնական կուլտուրաները պետք ե բոլոր բրիգադային հողամասերում տեղափորվեն դաշտի յերկարությամբ: Մյուս կուլտուրաները պետք ե զետեղվին այնպիսի հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր բրիգադում կուլտուրաների թիվն ըստ հնարավորության ամենաքիչը լինի, սակայն այնպես, վորպեսզի բրիգադների բեռնավորվածության հավասարաչափությունն ապահովի, այդ

նպատակով թույլատրելով համապատասխան չափով մեկ քանի կուլտուրաներ փոխարինել ուզիշ իրանց աշխատածավալությամբ համանիշ կուլտուրաներով:

20. Կոլտնտեսության մեջ ցանքսաշրջանի կազմակերպման ժամանակ պետք է հաշվի առնվի հետագայում աշխատավորական անհատական չունեսորմիջակ տնտեսությունների կոլտնտեսության մեջ մտնելու կամ նրանցից նոր կոլտնտեսություն կազմակերպելու անհրաժեշտությունը:

21. Այս ցանքսաշրջանները, վորոնք արդեն գոյություն ունեն իսկականում և բավարարում են պլանային առաջադրություններին, ագրոաեխնիկական և արտադրական պահանջներին, պահպանվում են: Այսպիսի ցանքսաշրջանների գաղտերի գետեղման մեջ յեղած թերությունները պետք է վերացվեն 1933 թվականի ընթացքում յեղած բարեհաջողնախորդները մաքսիմալ չափով ողտագործելով:

## ԲԻՒԳԱԴԱՅԻՆ ՀՈՂԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԶԵՏԵՂՈՒՄԸ

22. Բրիգադային հողաբաժինների գետեղման նախագիծը պետք է կազմվի միաժամանակ ցանքսաշրջանների գաղտերի գետեղման նախագծի հետ, բրիգադային հողաբաժինների գաղտերի հետ ավելի հարմար կերպով համադրելու նպատակով:

Ցանքսաշրջանների մտցնելը չպետք է ուղեկցվի կազմված կոլտնտեսային բրիգադների բեկումով:

23. Ցուրաքանչյուր բրիգադի համար հատկացվում է արտադրական հողաբաժին, իբրև կանոն, անցյալ տարիների կազմած սահմաններում: Իսկ յեթե բրիգադի այդ արտադրական հողաբաժինները չափազանց անջատ են, ցանքսաշրջանների կանոնավոր կազմակերպման հետ չեն կապակցվում կամ դժվարացնում են տրակտորների կանոնավոր և լիակատար ողտագործումը, — այն ժամանակ այդպիսի դեպ-

քերում ռայիսողբաժնի թույլտվությամբ բրիգադային հողաբաժինները նորից են նախագծվում:

24. Կոլտնտեսության մեջ մի ցանքսաշրջան կազմակերպելու ժամանակ յուրաքանչյուր բրիգադին հատկացվում են հողաբաժիններ այդ ընդհանուր կոլտնտեսային ցանքսաշրջանների բոլոր դաշտերում և բրիգադի վրա ամրացվում են ամբողջ ցանքսաշրջանի դաշտերի թվով: Այդ դեպքում բրիգադային հողաբաժինները պետք է գտնվեն մի կուսակտ մասսիվով:

25. Բրիգադին ընդհանուր կոլտնտեսային ցանքսաշրջանի դաշտերում միապաղաղ մասսիվ հատկացնելու անհընարության դեպքում, թույլտրվում և բրիգադի համար ինքնուրույն ցանքսաշրջան կազմակերպել, առանձնապես, յերբ կոլտնտեսության բրիգադները ցրված են ագարակային բնակությամբ:

26. Կոլտնտեսության մեջ յերկու կամ մի քանի ցանքսաշրջաններ կազմակերպելու դեպքում, յուրաքանչյուր բրիգադի համար հողաբաժին հատկացվում և միայն մի ցանքսաշրջանում:

Մանրաւրական Ցանքսաշրջանների շատ զանազան ախպել լինելու գեպքում, որինակ, յերբ կա գյուղամոտեկ ցանքսաշրջաններ աշխատածավալ կուլտուրաների (բամբակ, ձակընդեղ, ծխախոտ) մեծ տոկոսով և հեռու գտնված հասիկային ցանքսաշրջանով, թույլտրվում և առանձին կոլտնտեսություններում այս կանոնից հետ նահանջել բայց բրիգադին վոչ ավելի, քան յերկու ցանքսաշրջաններում հողաբաժիններ հատկացնելով:

27. Հատուկ ծխախոտագործական կոլտնտեսություններում բրիգադային հողաբաժիններ հատկացնելու դեպքում, անհրաժեշտ և ըստ հնարավորության ծխախոտի հողաբաժինները մոտեցնել ծխախոտի շինարարություններին (սարայներին, չորացնելու շենքերին):

28. Կոլտնտեսության մեջ ֆերմայի մոտիկ ցանքսաշրջան կազմակերպելու ժամանակ անհրաժեշտ և այդ ցանք-

սաշրջանը տեղավորել մի հողամասում, վոր ամրացված լինէ մի բրիգադի վրա: Իսկ յեթե ֆերմայի մոտիկ ցանք-սաշրջանի համար հատկացվում ե մեծ տարածություն, անհրաժեշտ է նրա վրա ինքնուրույն բրիգադա դնել, վորի չափը դաշտաբուծական բրիգադի չափից մեծ չպետք ե լինի:

29. Բրիգադային հողաբաժինների ցանքսաշրջանների դաշտերում զետեղումը վորոշվում ե ցանքսաշրջանի դաշտերի դիրքով:

Ցանքսաշրջանի դաշտերի ավելի նպատակահարմար զետեղման դեպքում ծայրերով դեպի գյուղը կամ հիմնական մթերքը հանձնելու կեաի ուղղությամբ, բրիգադային հողաբաժինները և եղավորվում են դաշտերին ուղղահայաց և գյուղին գուգահեռու: Ցանքսաշրջանի դաշտերի գյուղին զուգահեռական յեղած դեպքում, վոր մի շարք դեպքերում միանգամայն նպատակահարմար ե, առանձնապես, վորտեղ քիչ աշխատածավալ և քիչ փոխադրվելի կուլտուրաներին, բրիգադայի հողաբաժինները տեղավորվում են դաշտերին ուղղահայաց՝ ծայրերը դեպի գյուղը դուրս յեկած:

30. Ցուրաքանչյուր բրիգադային հողաբաժինը մատչելի պետք ե լինի, խուսափելով այս դեպքում նոր ճանապարհների ցանց կաղմակերպելուց՝ առանց դրա առանձին կարելության:

31. Բրիգադային հողբաժինները վորքան կարելի յեավելի կոմպակտ պետք ե լինեն, առանց ավելորդ ձգվածության և չպետք ե կտրվեն բնական արգելքներով (հեղողատներ, առվակներ և այլն), վորոնք պետք ե ոկտագործվեն իրերվ բրիգադային հողաբաժինների սահմաններ:

Բրիգադային հողաբաժինների բաժանման ժամանակ պետք ե հաշվի առնվի բրիգադայի դաշտային աշխատանքների ամբողջ շրջանում դեպի առանձին հողաբաժինները դուրս գալու, նրանց մեջ վրաններ և այլն շինելու անհրաժեշտությունը:

32. Ցանքսաշրջանի դաշտերի և բրիգադային հողաբաժինների նախազծման և իսկականում կտրելու ժամանակ, պետք ե հաշվի առնվի և ոգտագործվի յեղած վանդակային սիստեմը: Սակայն այս գեպքում ամենեվին չի կարելի թույլ տալ, վորպեսդի հարյուր հեկտարանոց վանդակն արգելքը ծառայի ցանքսաշրջանների դաշտերի և բրիգադային հողաբաժինների կանոնավոր բաժանման, և կանգ առնել վանդակների կոտորակման կամ դաշտերը վանդակային սիստեմի համեմատությամբ ուրիշ ուղղությամբ կտրելու առաջ, յեթե այդ պահանջվում ե արտադրության շահերի տեսակետից:

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

33. Ցանքսային տարածությունների պլանային առաջադրությունների և յերկրամասից ստացված ցանքսաշրջանների որինակելի սքեմների հիման վրա, կոլտնտեսությունների համար որինակելի ցանքսաշրջանների մշակումը կատարում ե ույինողբաժնին կից հատուկ կոմիսիան, ույինողբաժնի վարչի նախագահությամբ՝ ույացըրոնոմի, ույինողաչափի, քաղբաժնի պետի, ՄՏԿ-ի գիրեկտորների և ավագ ազրոնոմների կազմով:

34. Ույինական կոմիսիան ամեն մի կոլտնտեսության համար սահմանում է որինակելի ցանքսաշրջանների հետ միասին յուրաքանչյուր կուլտուրայի համար առաջնորդող արտադրական առաջադրություններ և աղբոտեխնիկական միջոցառությունների կոմպլեքսներ և մշակում, վորոնք ապահովում են ցանքսաշրջանների ամենաբարձր արտադրողականությունը:

Իրանց ույյոնի կոլտնտեսությունների համար ընդունված ցանքսաշրջանների սքեմների վերաբերմամբ ույինողբաժնը և ՄՏԿ պարտական են աշխատանքի և արտադրու-

թյան սիջոցների ոգտագործման գրաֆիկ ունենալ, ընդունված ցանքսաշրջանի ստուգման նպատակով՝ աշխատանքի և արտադրության ճիշտ և նպատակահարմար կազմակերպության վերաբերմամբ:

35. Հողաշխնարարը ընտրում է յեղած պլանային և հետախուզական մատերիալները, հայտնաբերում է կոլտնտեսության փաստացիորեն հողաշահեցումը, կոլտնտեսության վրա ամրացնելու նախագիծ և կազմում, ուղարկելով ռայոնական հողային կոմիսիային՝ յեղած վեճերի և կոլտնտեսության փաստացի հողաշահեցման սահմանների փոփոխման լուծման համար, չափողների ողնությամբ հայտնաբերում և նախորդ կուլտուրանները և դաշտերի վիճակը և աղբօնոմի ժամանակցությամբ կազմում հանձնարարված ցանքսաշրջանների դաշտերի, զետեղման և ըրիդաղային հողաբաժինների որինակելի տեղավորման նախընթաց նախադիմքը:

36. Կոլտնտեսության վարչությունը, կոլտնտեսական ակտիվի, աղբօնոմի և հողաշխնարարի հետ միասին ՄՏԿ-ի ղեկավարությամբ քննում և հանձնարարված որինակելի ցանքսաշրջանները և բնական (հող, ռելյեֆ և այլն) և արտադրական-տնաւեսական պայմանների համաձայն, ընդունում և կոնկրետ ցանքսաշրջան, վորոն ապահովում և պետական պլանային առաջադրությունների կատարումն՝ ըստ կուլտուրանների և բերքի ամենաշատ բարձրացումը:

37. Սրանից հետո հողաշխնարարը և աղբօնոմը կոլտընտեսության ըրիդաղիրների և չափողների հետ միասին կազմում են ցանքսաշրջանի դաշտերի ըրիդաղային հողաբաժինների, ցանքսաշրջանների դաշտերում կուլտուրանների 1933 թվի աշնան և 1934 թվի գարնան կոլտնտեսության տերրիտորիայի վրա զետեղելու ցանքսաշրջանի ամբողջ շրջանառության ընթացքում ըստ տարիների, յնւրաքանչյուր դաշտի համար, կուլտուրանների հաջորդականության նախադիմքը:

38. Բատ ցանքսաշրջանների, կազմված նախագծերը քըննվում են կոլտնտեսականների ժողովներում և նրանց ընդունվելուց հետո, կոլտնտեսության վարչության կողմից հանձնվում են ռայոնղաքաժինին ստուգման համար և ռայոնրեգիստրացիային ի հաստատություն:

39. Հաստատված ցանքսաշրջանները փոխադրվում են իսկականի մեջ ցանքսաշրջանային դաշտերի սահմանները, սահմանային նշաններով ամրացնելով (սյուներ և սահմանաքարեր) և մեկուսացվում են տրակտորի հարմար հողերը:

40. ՌԴԿ-ի կողմից հաստատված և իսկականի մեջ փոխադրված ցանքսաշրջանները ցուցակագրվում են ռայոնղաքաժնությունում առանձին ցուցակագրական քարտերի մեջ և կոլտնտեսության արվում են դոկումենտներ նրա հողաշահեցման համար գծագրի վրա ցանքսաշրջանների դաշտերի և ըրիդաղային հողաբաժիններով։ ՄՏ կայաններին նույնպիսի գծագրի և արվում նրա գործունեյության ամրողությանի համար։

41. ՌԴԿ ի կողմից հաստատված և իսկականի մեջ փոխադրված ցանքսաշրջանների մեջ, ինչպիսի փոփոխություննել վոր լինի, կարող ե կատարվել միայն Յերկրողվարի թույլտվությամբ, ռայոնղաքաժինի պատճառապահանյալ առաջարկության հիման վրա։

42. Յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ պետք է գաշտերի պատմության դիրք սահմանված լինի, վորի լցնելը պետք և դրվի դաշտաբույժ ըրիդաղի վրա, ՄՏԿ-ի աղբօնոմի ղեկավարությամբ։

43. Ռայոնղաքաժինի և ՄՏԿ ի դիրքեկտորների վրա անձնական պատասխանատվություն և դրվում ցանքսաշրջանների փաստացի իրականացման և նրանց վորակի համար։

44. Ցանքսաշրջանների կոլտնտեսությունների մեջ մրցնելը, իբրև խորհրդային իշխանության միջոցառումներից մեկը, վորն ուղղված է կոլտնտեսությունների ամրացման

վրա, կհանդիպի կատաղի դիմադրության խորհրդային պետության և կոլտնտեսային շինարարության դասակարգայնապես թշնամի եկեմենատների կողմից:

Դեռ ևս չջախջախված դասակարգային թշնամին կփորձի հակադրիլ պետական շահերը կոլտնտեսությունների շահերին, ոգտագործել կոլտնտեսականների վորոշ մասի հետամնաց տրամադրությունները, խեղաթյուրել կամ հետկամեցնել ցանքսաշրջանի մտցնելը:

Այդ պատճառով ցանքսաշրջանի մտնելու վրա մեխիված պետք և լինի գյուղատնտեսության մեջ աշխատող բոլոր կուսակցական-խորհրդային և անտեսական կազմակերպությունների ուղաղրությունը:

Ցանքսաշրջանների բոլոր աշխատանքում պետք և հայտնագործի անխոնջ դասակարգային արթնություն:

Ցանքսաշրջանների մտցնելը պետք և ընկ. Ստալինի լողունգի — բոլոր կոլտնտեսությունները գարձնել ունեոք — իրազործան ամենալուրջ միջոցներից մեկը լինի:

Յերկրողության վորած պետ՝ Դենիսենկա

Դիտական քարտուղար յերկրվարի բյուրոյի՝ Կիտայվ



3405

С — Х

Ответственный редактор А. Г. АВАКЯН

Технический редактор Г. М. МАРКАРЯН

Сдано в набор 2|IX 1933 г.

Подписано в печать 15|IX 1933 г.

Статформат 66 125x176

Упаковка № Б 443

Типография им. „Стачки 1902 г.“ СККПТ

в Ростове на-Дону

Объем 21/8 п. л. Заказ № 4349, Тираж 2000



ՀՀ Ազգային գրադարան



NL0280401

9862 25 чпч.  
Цена 25 чпч.  
коп.

33774

16833

ԱՎ  
ՀՊ  
ՕՐ 9



На армянском языке

А. П. Китаев

Севообороты в колхозах  
в связи с осенним севом  
1933 года

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱՎԱՐԱՆ ԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՓՈՂ. № 53  
ԳՐԱԿԱՆԱՐԱՆ (ՎԵՐԱԲԵՐԵՑՐ)